ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ԱՐԹԻԿԻ N4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-Ի 2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն
1.Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերը
1. 1 Հաստատության շենքային պայմաններ
1. 2 Հաստատության նյութատեխնիկական բազան
1. 3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը
1. 4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ
1. 5Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում
1.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեղնոլոգիաների և նորարարությունների ներկայացում
1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն
1.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն
1.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն
1. 10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն
2. Նպատակների և խնդիրների սահմանումը
3. Ուսումնական հաստատության գործունեությունը
ա) Կրթական կարիքների բավարարում
բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին
գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն ու միջոցառումները
5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման պատասխանատուները
6.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները
7. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը
8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իականացման համար անհրաժետ միջոցները և նյութատեխնիկական պարագաները
9. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իականացման վերահսկողության մեխանիզմներ
Եզրափակում

Ներածություն

Դպրոցի զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում՝ ապահովելով դպրոցի 5 տարվա զարգացման տեսլականը: ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2024–2029 թթ. ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու մասին» հրաման N35-Ն պահանջներին համապատասխան:

Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, ցանկացած ինֆորմացիայի արագ հասանելիության շնորհիվ, աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում: Այժմ, առավել քան երբևէ, նորարարությունն ու ստեղծագործականությունը մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ են՝ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում: Այսօր տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) դարաշրջանում այն անձինք կամ խմբերը, ովքեր կարողանում են վիրտուալ իրականությունը օգտագործել՝ նպատակաուղղելով նորարարական գաղափարների, նախագծերի իրագործմանը, կարողանում են ստեղծագործաբար մոտենալ առաջացած խնդիրներին և շատ ավելի հաջողակ են: Կրթությունն այն ճանապարհն է, որը հնարավորություն է ստեղծում անձի մեջ բացահայտելու նոր որակներ և կարողունակություններ: Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Կրթությունը նաև պետք է հարմարեցվի անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրին: Գնալով ավելանում է որակյալ մասնագետների պահանջարկը, և աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելը դառնում է առաջնահերթություն: Հանրակրթության դերն աճում է. միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության և արժեքային որակներ: Կրթական բարեփոխումները, որոնք շարունակաբար են տեղի ունենում, պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին համընթաց: Հասարակության զարգացման այս փուլում անհրաժեշտություն է առաջանում դպրոցը դարձնել այնպիսի միջավայր, որը կպատրաստի պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորմանը:

2. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

1.1 Հաստատության շենքային պայմաններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի շենքը հիմնադրվել է 1987թ: Շենքի ընդհանուր մակերեսը՝ 5000 ք/մ: Շենքի մաքրվող մակերես՝ 4200ք/մ, դպրոցին կից հողամաս՝ 10000 ք/մ: Դպրոցի շենքում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը: Ուսումնական հաստատության շենքը 2020 թվականին վերանորոգվել է «Հայ կրթական հիմնարկության» կողմից: Դպրոցն ունի լուսավոր, ընդարձակ և հարմարավետ շենքային պայմաններ՝ պատուհանները և դռները փոխված են, հատակը՝ սալիկապատ և լամինատապատ: Դպրոցի տանիքը ևս վերանորոգված է: Դպրոցում առկա են 23 դասասենյակներ տնօրենի, տնօրենի տեղակալի, վարչատնտեսական համակարգողի, ՄԿԱ-ի, ԴԱԿ-ի , ուսուցչի օգնականի, հաշվապահի աշխատասենյակներ, Փառքի սրահ, համակարգչային կաբինետ, Արմաթ լաբորատորիա, ՆԶՊ կաբինետ, գրադարան, բուժկետ, խոհանոց, ճաշարան, 12 սանհանգույց, պահակատուն, նկուղ, ապաստարան: Դպրոցն ունի սպորտհրապարակ, հանդիսությունների դահլիճ (120 տեղ) և մարզադահլիճ՝ ապահովված հանդերձարաններով, լոգարաններով, մարզիչի (ուսուցչի) սենյակով և լոգարանով: Դպրոցն ապահովված է լոկալ (գազի) ջեռուցման համակարգով, եռաֆազ հոսանքով, տարահանման 3 ելքերով: Դպրոցի ճաշարանը և խոհանոցը նույնպես ջեռուցվում են: Շենքի պայմանները համապատասխանում են անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:	Դպրոցի տարածքն առանձնացված չէ ցանկապատով, բակը դեռևս ունի կանաչապատելու և ասֆալտապատելու կարիք: Դպրոցն ունի տեսախցիկների և գիշերային լուսավորության կարիք: Դպրոցի նկուղը, ապաստարանը և լոգարաններն ունեն վերանորոգման կարիք: Դպրոցում իրականացվում է ներառական կրթություն, սակայն չկան շենքային համապատասխան հարմարեցումներ, սանհանգույցներ ԿԱՊԿՈՒ սովորողների համար:

Նպատակ 1

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան շենքային և բակային պայմանների ստեղծում:

Խնդիր

1) Ստեղծել ԿԱՊԿՈՒ սովորողների համար ֆիզիկական հարմարեցումներ:
2) Խնամել և բարեկարգել դպրոցի տարածքը:
3) Ստեղծել մոտիվացնող և հարմարավետ կրթական միջավայր:

Գործողություն	Ժամկետներ	Պատասխանա-տուներ	Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ
ա)Տարբեր միջոցների և ծրագրերի օգնությամբ դպրոցի բակում կառուցել թեքահարթակ ԿԱՊԿՈՒ սովորողների տեղաշարժն ապահովելու համար: բ)Առանձնացնել դպրոցի տարածքը, բարեկարգել բակը, կանաչապատել դպրոցամերձ պուրակը, տարածքը համալրել խաղերով: գ)Ապահովել դպրոցի տարածքը տեսախցիկներով և գիշերային լուսավորությամբ: դ)Կանաչ տարածքների բարեկարգում	2024-2026թթ 2024-2028թթ 2024-2025թթ 2024-2026թթ	Հիմնադիր, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող, բակապահ, նորոգող բանվոր	Կրթության շահագրգիռ կողմերի ներգրավում, ֆինանսական միջոցների ներդրում, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորներ, բարերարներ, արտաբյուջետային միջոցներ: Մշտադիտարկում վարչատնտեսական համակարգողի կողմից կիսամյակային և տարեկան զեկույցներ, ֆինանսական եռամսյա հաշվետվություններ: Աշխատանքների իրականացման արդյունավետության ստուգում, շինարարության կատարման ակտեր, կահավորման փաստաթղթեր, գրքերի ընդունման հանձնման ակտեր, գնման ավարտից հետո ԿԽ արձանագրություններ, հաշվետվություններ: Կներգրավվեն նաև բարեգործական կազմակերպություններ, վարչատնտեսական աշխատակիցների օգնությամբ կօգտագործվեն դպրոցի, ինչպես նաև համայնքի ֆինանսական միջոցները: Աշխատանքներում կներգրավվեն աշակերտներ, ծնողներ, շահագրգիռ անձիք՝ մարդկային ռեսուրս:

Ռիսկեր

1)Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն, արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ:
2)Շինանյութերի և ծառայությունների թանկացում:
3)Դրամաշնորհային ծրագրեր կազմելու, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մոտիվացիայի պակաս:

Ռիսկերը մեղմացնող գործոողություններ

1)Դպրոցի շրջանավարտների և շահագրգիռ մարդկանց ներգրավում:
2)Դպրոցի ողջ գործունեության լուսաբանում՝ դպրոցի խնդիրների ներկայացում:
3) Բյուջեի ճիշտ պլանավորում, առաջնային խնդիրների վերհանում և լուծման ուղիների որոնում:

1.2 Հաստատության նյութատեխնիկական բազան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
2020թ-ին «Հայ կրթական հիմնարկության» կողմից տրամադրվել է մեծ քանակությամբ նոր գույք՝ նիստերի դահլիճի համար 120 աթոռ, գրատախտակներ՝ 9 հատ, ուսուցչական սեղան՝ 9 հատ, պահարան՝ 15 հատ, աշակերտական աթոռ՝ 60 հատ, աշակերտական սեղան՝ 30 հատ, համակարգիչ՝ 4 հատ, կախիչ՝ 10 հատ: Նվիրաբերվել է տնօրենի և տնօրենի տեղակալի կաբինետների համար անհրաժեշտ գույք՝ գրապահարաններ, աշխատանքային սեղաններ և աթոռներ: «Հայ կրթական հիմնարկության» կողմից վերանորոգվել է հին գույքը՝ երեսպատվել սեղաններ և աթոռներ: Դպրոցում գործում է նաև «Արմաթ» լաբորատորիա՝ համապատասխան գույքով: Գրադարանն ապահովված է դասագրքերով, գեղարվեստական, (10 000 կտոր) մեթոդական և ծրագրային գրականությամբ: Դպրոցում առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան:	Նյութատեխնիկական բազան չի համապատասխանում ժամանակի պահանջներին: Չկան նոր սարքավորումներով և նյութերով հագեցած լաբորատորիաներ, առարկայական կաբինետներ: Համակարգչային սենյակն առկա է, բայց ապահովված չէ ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ համակարգիչներ, էլեկտրոնային գրատախտակ, տպիչ սարքեր, պրոյեկտոր և այլն: Խոհանոցային սարքավորումների և գույքի թարմացման և համալրման կարիք կա: Դպրոցն ունի նաև սպորտային գույքի կարիք:

Նպատակ 2

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազայի և անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում:

Խնդիր

1.Նյութատեխնիկական բազայի համալրում:

2.Առարկայական կաբինետների ստեղծում, համալրում:

3. Մարզագույքի, խոհանոցային գույքի համալրում

4. ՈՒսումնական նյութերի, դիդակտիկ պարագաների, անհրաժեշտ մեթոդական և գեղարվեստական գրականությամբ գրականության ապահովում:

Գործողություն	**Ժամկետներ**	**Պատասխանա-տուներ**	**Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ**
ա) Նորոգել դպրոցում առկա համակարգիչները և ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ, պրոյեկտորներ: բ)Ստեղծել լաբորատորիաներ, առարկայական կաբինետներ, պարբերաբար համալրել նյութերով: գ)Գրադարանը և աջակցման սենյակները պարբերաբար համալրել անհրաժեշտ գրականությամբ, նորույթներով, ուսումնական նյութերով, դիդակտիկ պարագաներով, անհրաժեշտ մեթոդական գրականությանմբ:	2024-2025թթ 2024-2028թթ 2024-2025թթ	տնօրեն,վարչա-տնտեսական համակարգող, Հիմնադիր, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, տնօրիություն, ԱԽ, ԴԱԿ, տնտեսվար, վարչատնտեսա-կան համակարգող, գրադարանավար	Հիմնադիր, լիազոր մարմին, դրամաշնորհային ծրագրերի, հովանավորների, արտաբյուջետային և դպրոցի ֆինանսական միջոցները, անհրաժեշտու-թյան դեպքում կներգրավ-վեն դոնոր կազմակերպու-թյուններ: Աշխատանքները կկատարվեն դպրոցի վարչատնտեսական մասի օժանդակությամբ: Առարկայական կաբինետ-ների, լաբորատոր գույքի և փորձերի համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերումը կկատարվի ըստ նախապես մշակված գույքացուցակի:

դ)Մարզադահլիճի բարեկարգում, մարզագույքի ձեռք բերում	2023-2025թթ	տնօրեն,վարչա-տնտեսական համակարգող, Հիմնադիր, լիազոր մարմին, կառավարման խորհուրդ, ԱԽ, ԾԽ, ՄԽ	Վերանորոգման համար անհրաժեշտ նյութեր, համա-պատասխան տեխնիկա, նյութերի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինան-սական միջոցներ՝ ըստ նախագիծ-նախահաշվի: Մարզագույքի ձեռք բերումը կկատարվի ըստ նախապես մշակված գույքացուցակի:

Ռիսկեր

1)Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների , արտաբյուջետային միջոցների բացակայություն, համավարակ, արտակարգ դրություններ: 2)Դրամաշնորհային ծրագրեր կազմելու, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մոտիվացիայի պակաս: 3)Մարդկային ռեսուրսների անտարբերություն:

Ռիսկերը մեղմացնող գործողություններ

1)Դպրոցի շրջանավարտների և շահագրգիռ մարդկանց ներգրավում:
2)Դպրոցի ողջ գործունեության լուսաբանում՝ որպես աշակերտների ընդունելության խթանման միջոց:
3)Հակահամաճարակային և անվտանգության կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում: Արդյունավետ ուսունմառության կազմակերպում:
4)Դպրոցի դերի բարձրացում:

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամներից, որը պատշաճ կերպով իրականացնում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունները: Խորհուրդը դպրոցի կառավարման գործընթացի անմիջական մասնակիցներից է և նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում և մշտապես աջակցում է դպրոցի բոլոր նախաձեռնություններին: Առկա է մասնակցային կառավարման գործունեություն: Տնօրենի կողմից իրականացվող և վերահիսկվող	Կառավարման մարմնի որոշ անդամներ թերի են կատարում իրենց գործառույթները, լավ չեն տիրապետում իրենց իրավունքներին և պարտականություններին: Կա կառավարման խորհրդի կողմից ինքնուրույն նախաձեռնությունների

ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործմանը, կրթության որակի բարձրացմանը վերաբերվող առաջարկները ողջունվում են լիազոր մարմնի և կառավարման խորհրդի կողմից և ստանում աջակցություն: Տնօրենը խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով: Կառավարման խորհուրդը վերահսկում է զարգացման ծրագրի կատարումը, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները: Խորհուրդը հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները: Քննարկում է նաև ներքին և արտաքին գնահատման արդյունքները, իրականացնում կառուցվածքային և պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի օրինակելի վարումը: 2022-2023 ուստարում խորհուրդն անցկացրել է 4 նիստ: Կառավարման խորհուրդն ուսումնասիրել է հաշվապահական և կադրային նորմատիվները, աշխատողների դրույքաչափային ցուցակը, հաստիքացուցակը, որից հետո այն ներկայացվել է լիազոր մարմնի հաստատմանը: Լսել և հավանության է արժանացրել ներքին գնահատման հաշվետվությունը: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունը համաձայն Հանրապետությունում առկա օրենսդրական պահանջների տեղադրվում են դպրոցի կայքում: Կառավարման խորհուրդի և հաստատության տնօրենի համագործակցությունը պետք է լինի կառուցողական, նպատակային, ի նպաստ դպրոցի:	պակաս:

Նպատակ 3

Կառավարման մարմինի դերի բարձրացում, համագործակցության բարելավում, օրենքով սահմանված կարգով գործունեության ընդլայնում:

Խնդիր

1.Զարգացնել և խրախուսել կառավարման մարմինի և հաստատության տնօրենի միջև հանդիպումները, քննարկումները համագործակցության ամրապնդման նպատակով:

2. Կարևորել կատավարման խորհրդի դերը դպրոցի կառավարման գործում, զարգացնել մասնակցային գործընթացը:

3. Համագործակցության արդյունքում դպրոցի կառավարումը դարձնել ավելի արդյունավետ , տեսանելի և մասնակցային:

Գործողություն	**Ժամկետներ**	**Պատասխանա-տուներ**	**Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ**
ա) Մշտապես համագործակցել կառավարման խորհրդի հետ ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման գործում: **բ)** Ապահովել կառավարման խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, ներքին գնահատման աշխատանքներին **գ)** Ակտիվացնել նյութատեխնիկական բազայի հարստացման, դպրոցի ցանկապատման ուղղությամբ խորհրդի աշխատանքները: **դ)** Ապահովել հաստատության տնօրենի, կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների հետ սերտ համագործակցությունը:	2024-2029թթ 2024-2026թթ 2024-2025թթ 2024-2029թթ	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնօրե-նի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, ՄԿԱ, դասղեկներ, ԿԽ, ՄԽ, ԱԽ, ԾԽ շրջանավարտներ, համայնքի ներկայացուցիչներ, ձեռներեցներ, բարերարներ	Կառավարման խորհրդի բոլոր անդամներ, բարերարներ, աշխատանք և համագործակցություն դպրոցի զարգացման տարբեր ոլորտներում Կառավարման խարհրդում քննարկել կրթության կառավարման լիազորված մարմնի, ՄԽ, ԾԽ, ԱԽ առաջարկությունները զարգացման ծրագրի վերաբերյալ:

Ռիսկեր

1)Խորհրդի դերի նվազում, որոշ անդամների ձեռնպահ վերաբերմունքը քննարկվող հարցերի և դրանց լուծման վերաբերյալ:

2)Կառավարման խորհրդի նախաձեռնողականության պակաս:

3)Ժամանակավրեպ որոշումների կայացում, գործողությունների իրականացում:

4)Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս:

Ռիսկերը մեղմացնող գործողություններ

1)Խորհրդի անդամների հետ անհատական աշխատանք:

2)Խորհրդի ներսում դիմացինի կարծիքը հարգելու, այն ազատ արտահայտելու միջավայրի ձևավորում և պահպանում:

3) Արդյունավետ համագործակցության համար առաջնահերթ խնդիրների ներկայացում, լուծումների նպատակով միասնական որոշումների կայացում, գործողությունների իրականացում:

4)Հակահամաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում, հեռավար հարթակից օգտվելու կարողությունների զարգացում: Համագործակցության խթանում:

1.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, ծնողական համայնքի, շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Հաստատությունում ուսումնական գործընթացն իրականացվում է հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների, մանկավարժների, սովորողների և ծնողների փոխադարձ վստահության պայմաններում: Դպրոցն ակտիվ համագործակցում է կրթության պետական կառավարման մարմինների, Շիրակի մարզպետարանի, Արթիկի համայնքապետարանի հետ: Լիազոր մարմնի հետ աշխատանքային հարաբերությունները թափանցիկ են և կառուցողական: Տեղի են ունենում բազմաթիվ միջոցառումներ, քննարկումներ, խորհրդատվություններ, աջակցություն դպրոցին, թափանցիկ փաստաթղթաշրջանառություն: Համայնքը՝ որպես դպրոցի զարգացման շահագրգիռ կողմ, մշտապես գտնվում է դպրոցի հետ համագործակցության մեջ: Արթիկի համայնքեպետարանի հետ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, որոնք ավելի հետաքրքիր են դարձնում սովորողի առօրյան: Կազմակերպվում են միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական էքսկուրսիաներ, շաբաթօրյակներ, ծառակունկ, որոնք նպաստում են սովորողների սոցիալ-քաղաքացիական կարողունակության զարգացմանը: Սովորողների մոտ վաղ տարիքից ձևավորում է պետության և համայնքի նկատմամբ սեր, հարգանք, հոգատար վերաբերմունք: Համայնքն աջակցում է դպրոցին նաև անհարգելի բացակայող, հանրա-	Կրթության ոլորտով հետաքրքրվողների համագործակցության և ներգրավվածության պասիվություն: Ուսուցիչների մոտ ձեռնարկած գործի թերհավատություն: Հոգաբարձուների և շրջանավարտների խորհրդի բացակայություն: Համագործակցության պասիվություն այլ մարզերի և արտերկրի դպրոցների հետ: Ծնողական համայնքը չունի սեփական նախաձեռնողականություն, աշխատանքները կազմակերպվում են մանկավարժական

կրթությունից դուրս մնացած, սոցիալապես անապահով, կյանքի դժվարին իրավիճակներու հայտնված սովորողներին աջակցություն ցույց տալու համար: Դպրոցը համագործակցում է նաև ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, ոստիկանության, Հայ առաքելական եկեղեցու Արթիկի թեմի, Արթիկի քաղաքային գրադարանի, Արթիկի մշակույթի տան, ՌԴ հյուպատոսության, իրավապահ մարմինների, «Մասնակցային դպրոց» , «Ինտերակտիվ կրթության զարգացում» , «Զևափոխվող կրթություն» հիմնադրամների, տարածաշրջանի այլ դպրոցների ու մանկապարտեզ-ների, թանգարանների ու թատրոնների, մեր դպրոցի շրջանավարտների և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ: Դպրոցը համա-գործակցում է նաև բնապահպանական կազմակերպությունների հետ, որի արդյունքում կանաչապատվել է դպրոցամերձ տարածքը: Համա-գործակցությունը կապված է նաև այն բանի հետ, թե ինչքանով է դպրոցը ակտիվ և բարյացակամ գործընկեր այլ կազմակերպությունների հետ: Դպրոցում ակտիվ է նաև ծնողական համայնքի գործունեությունը: Այն մշտապես ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ծնողական խորհուրդն ու ծնողները զգալի ներդրում ունեն սովորողների կրթության ու դաստիարակության գործում: Ծնո-ղական համայնքի միջոցով կազմակերպվում են հետաքրքրաշարժ և նպատակային միջոցառումներ՝ այցելություն թանգարաններ, մշակու-թային օջախներ, անվանի մարդկանց տուն-թանգարաններ, պատմա-մշակութային վայրեր և ցուցահանդեսներ, որոնք նպաստում են երեխայի բազմակողմանի զարգացմանը և աշխարհայացքի ընդլայնմանը: Ծնողա-կան համայնքն ակտիվ մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անա-պահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքնե-րին,աջակցում է դպրոցին՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների մանկավարժահո-գեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում:	անձնակազմի կողմից: Կան ծնողներ, որոնք անտարբեր են երեխաների ուսման ու դաստիարակության նկատմամբ:

Նպատակ 4

1)Խորացնել համագործակցային և մասնակցային հարաբերությունները բոլոր ուղղություններով:
2)Խրախուսել և խթանել սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու գործընթացը, զարգացնել ակտիվ քաղաքացու կարողունակություն:

Խնդիր

1)Ընդլայնել համագործակցության շրջանակը (համայնքապետարան, ՀԿ-ներ, կրթական հաստատություններ, ծնողներ և այլն): **2)**Զարգացնել սոցիալ-մշակութային դպրոցի գործունեությունը:

Գործողություն	**Ժամկետներ**	**Պատասխանա-տուներ**	**Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ**
ա) Ակտիվ համագործակցել տարածաշրջանի ուսումնական հաստատությունների հետ, իրականացնել համատեղ ծրագրեր, սովորողների մոտ դաստիարակել կամավորություն, առաջնորդություն, մասնակցային արժեքներ: **բ)** Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ (թղթի մակուլատուրա, շաբաթօրյակներ, ծառատունկ և այլն): Ձևավորել հոգատար վերաբերմունք համայնքի, շրջակա միջավայրի նկատմամբ: **գ)**Կազմակերպել տարաբնույթ էքսկուրսիաներ, գիտարշավներ Հայաստանի տարբեր պատմա-մշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ, թատրոններ: Պետության կողմից տրամադրած դպրոցական աբոնենտային համակարգի կիրառում՝ խթանելով դպրոց-մշակութային օջախ կապը, նպաստելով աշակերտների գեղագիտական դաստիարակությանը: **դ)**Անցկացնել հանդիպումներ, հյուրընկալություն, ցերեկույթներ, արվեստագետների ու արհեստագործ վարպետների, մշակութային գործիչների հետ, համագործակցել կրթության ոլորտի, մարդու իրավունքների պաշտպանության և այլ ՀԿ-ների հետ:	2024-2029թթ 2024-2026թթ 2024-2029թթ 2024-2027թթ	տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ Կառավարման խորհուրդ, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ, վարչատնտեսական համակարգող տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ	Կազմակերպում է տնօրենը, ՄԿԱ-ն, ԴԱԿ-ը, ծնողների և դասղեկների հետ՝ համագործակցելով համայնքապետարանի, ՀԿ-ների, շրջանավարտների հետ: Ձեռնարկատիրական գործունեության ծավալում, շաբաթօրյակներ, ծառատունկ, ստեղծագործական ցուցահանդեսներ, այցելություն թանգա-րաններ, թատրոններ, մշակութային օջախներ: Տանել բացատրական աշխատանքներ համագործակցության սերտացման, միջոցառում-ների կարևորության, իրազեկման, հանդիպում-ների պատշաճ նախապատ-րաստման ուղղությամբ: Որոշումների կայացման հարցում, մասնակցային մշակույթի, հանդուրժողա-կանության, բազմակար-ծության խրախուսում: Ծնողների հետ բաց դռների օր, սեմինարներ, քննարկումներ, ծնողա-վարման դասընթացներ:

Ռիսկեր

1)Աշակերտական համակազմի թերահավատ մոտեցումը կազմակերպված միջոցառումների մասին:

2)Խթանող հանգամանքների բացակայությունը, մոտիվացիայի պակասը:

3)Շահագրգիռ կողմերի չներկայանալը որպես կարևոր դերակատարում ունեցող կողմեր:

4)Համավարակով պայմանավորված առկա շփումների նվազում, շահագրգիռ կողմերի՝ հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս:

Ռիսկերը մեղմող գործողություններ

1)Մրջոցառումների կարևորության մասին իրազեկում, կազմակերպման և մասնակցության կարևորության ներկայացում և հանդիպումների պատշաճ նախապատրաստում:

2) Դպրոց-համայնք համագործակցությունը մեկ ամբողջական համակարգի դիտարկում, ժողովրդավարության ապահովում և ամրապնդում:

3)Համագործակցության շրջանակներում մասնակցային որոշումների կայացում, հանդուր-ժողականության, բազմակարծության խրախուսում, ճկունության հմտությունների զարգացում:
4)Հակահամաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկում, դպրոց-համայնք կապի սերտացում:

1.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի մանկավարժները ըստ հանրակրթության պետական չափորոշչային պահանջների ապահովում են հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները: Ուսուցիչներն ըստ անհրաժեշտության պարբերա-բար մասնակցում են մասնագիտական որակավորումների բարձ-րացման համար կազմակերպվող սեմինարների, վեբինարների և ունեն համապատասխան վկայականներ, հավաստագրեր: Դպրոցում գործում է նպատակաուղղված և արդյունավետ ներդպրոցական վերահսկողություն: Ապահովված է նաև բազմակարծիք, մասնակցա-յին, ներառական, արծեքային միջավայրը: Դպրոցում հնարավորու-թյան սահմաններում ապահովվում է յուրաքանչյուր մանկավարժի համար հարմարավետ ստեղծագործական միջավայր: Բոլոր ման-կավարժներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: Մանկավարժները դասապրոցեսում կիրառում են փոխներգործուն	Կան ուսուցիչներ, ովքեր քիչ են զբաղվում ինքնակրթությամբ և լավ չեն տիրապետում համակարգչին: Ուսուցիչների մեծ մասը խուսափում է ԿԳՄՄՆ կազմակերպած «Տարվա լավագույնները» մրցույթին և կամավոր ատեստավորմանը մասնակցելուց: Ուսումնական գործընթացում նկատվում է նախաձեռնողականության և ստեղծարարության պասիվություն: Նկատվում է ԱՈՒՊ կազմելու, ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու հմտությունների պակաս:

մեթոդներ՝ դասը դարձնելով աշակերտակենտրոն: Ուսուցիչների մեծ մասը դասապրոցեսում կիրառում են ՏՀՏ-ներ, կազմակերպում են փորձի փոխանակում դպրոցի և այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ: Մանկավարժական համակազմը պատրաստակամ է նորի և նորարարությունների նկատմամբ, ինչպես նաև սովորողների մոտ կարողունակությունների ձևավորման ու զարգացման ուղղությամբ կրթության կազմակերպման գործում: Հաստատությունում առաջին քայլերն է արվում նախագծային, հետազոտական աշխատանքներ կատարելու: Ունենք մեկ «Տարվա լավագույն ուսուցիչ» (2017թ.) մրցույթի հաղթող, մեկ ուսուցիչ առաջին աստիճանի որակավորման տարակարգ ունեցող, չորս կամավոր ատեստավորված, ովքեր ստանում է հավելավճար: Դպրոցում անցկացվում են ռազմահայենասիրական միջոցառումներ, դասեր, հանդիպումներ,ֆիլմերի դիտում, այցելություն զորամաս:	

Նպատակ 5

Մանկավարժական համակազմի որակական և մասնագիտական կարողունակությունների բարելավում :

Մրցունակ, մոտիվացված, կոմպետենտ անձնակազմի ձևավորում:

Խնդիր

1) Կազմակերպել ուսուցիչների կատարելագործման և ինքնազարգացմանն ուղղված աշխատանքներ:
2) Ապահովել դպրոցում մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պատշաճ պայմաններ:
3) Ստեղծել վստահության, համերաշխության մթնոլորտ:
4) Հետևել հաստատության աշխատողների բարեվարքությանը, սոցիալական արդարության պահպանմանը:

Գործողություն	Ժամկետներ	Պատասխանատուներ	Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ

ա) Ուսուցիչների հետ քննարկել ՀՊՉ-ն և տալ պարզաբանումներ նրանից բխող բովադակային, ծրագրային և մեթոդական փոփոխությունների մասին: Մանկավարժ-ների ուսուցումն ու զարգացումը կազմա-կերպել ֆորմալ և ոչ ֆորմալ եղանակով: **բ)** Մեթոդմիավորումների հետ համատեղ մշակել ինքնազարգացման և ինքնակրթու-թյան օրինակելի նմուշ, կազմակերպել և աջակցել ուսուցչի կատարելագործմանը: **գ)** Աջակցել մանկավարժներին՝ մշակելու և տպագրության ներկայացնելու իրենց մե-թոդական և մասնագիտական աշխատանքը: **դ)** Աջակցել ուսուցիչներին տիրապետելու գնահատման համակարգին, կիրառել ուսուցանող գնահատում և գնահատման բնութագրիչները՝ օբյեկտիվ գնահատում իրականացնելու հաար: **ե)**Զ արգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունները: Անվտանգ համացանցի կանոնների պահպանում,վերահսկողության իրականացում դպրոցում: **զ)**Աջակցել ուսուցիչներին մասնակցելու ‹‹Տարվա լավագույններ›› մրցույթին և կամավոր ատեստավորմանը: **է)** Նպաստել համընդհանուր ներառական կրթության գործընթացում ուսուցիչների կատարեկագործմանը, կարողունակու-թյունների զարգացմանը: **ը)**Նպաստել դպրոցում հեռավար կրթական ծառայությունների մատուցման, էլեկտրոնային պաշարներից օգտվելու, առցանց դասընթացներ կազմակերպելու աշխատանքներին:	2024-2026թթ 2024-2025թթ 2024-2029թթ 2024-2025թթ 2024-2027թթ 2024-2025թթ	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ՄԿԱ, մ/մ նախագահներ, մենթոր ուսուցիչներ, տնօրեն, օպերատոր տնօրեն, հոգեբան, ուսուցչի օգնական	ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀՄԿ, ՏՄԱԿ, ՀԿ-ներ, հիմհադրամներ Տարակարգի, կամավոր ատեստավորման, պարտադիր ատեստավորման նախատեսված գումարներ: Փորձառու ուսուցիչների փորձի փոխանակում, միասնական, համագործակցային աշխատանք բոլոր ոլորտներում: Հիմնադիր, լիազոր մարմին, բարերարներ, վարչատնտեսական համակարգող, դրամաշնորհային ծրագրեր: Համակարգիչներով համալրված համակարգչային կաբինետ, մարդկային ռեսուրսներ

Ռիսկեր

1)Որոշ մանկավարժների մոտ մասնագիտական նախաձեռնողականության և կոմպետենտության պակաս՝ կրթական ծրագրերի և նորարարական տեխնոլոգիաների ներդրման համար:
2)Որոշ մանկավարժների պասիվությունը գործընկերների հետ համագործակցային հարաբերություններում:
3)Մանկավարժների բացասական վերաբերմունքը կրթական բարեփոխումների, դպրոցի ընդհանուր գործունեության նկատմամբ:

4)Աշխատատարության պատճառով ուսուցիչների ստեղծագործական ներուժի ոչ բավարար օգտագործում, ուսուցչի հեղինակության անկում:

Ռիսկերը մեղմող գործողություններ

1)Որակավորման բարձրացման ուղղությամբ հետևողական աշխատանքների իրականացում, մանկավարժամեթոդական աջակցության տրամադրում:
2)Խրախուսանքի տարբեր ձևերի կիրառում:
3)Աշխատավարձի բարցրացում, պարգևատրումներ:
4) Ինքնակրթության և ինքնազարգացման համապատասխան միջավայրի և գործիքների տրամադրում:
5)Մանկավարժների բազմակարծության, մասնակցային մշակույթի զարգացում, դիրքորոշումների հարգում, խթանում:

1.6 Հաստատության կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ժամանակակից դպրոցն անհնար է պատկերացնել առանց ՏՀՏ տեխ-նոլոգիաների և նորարարությունների: Ամեն օր դրանք օգտագործվում են թե՛ դպրոցի տնօրինության, թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների և նրանց ծնողների կողմից: Դպրոցն ունի համակարգչային դասասեն-յակ, որտեղ անցկացվում են ոչ միայն «Ինֆորմատիկա» առարկայի դասաժամերը, գործնական, լաբորատոր աշխատանքները, այլև տարբեր առարկաների տեղեկատվական, ինտեգրված և ցուցադրա-կան դասեր, միջոցառումներ: Ինտերնետի լիարժեք օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին օգտվել տարբեր էլեկտրո-նային կրթական հարթակներից, անհրաժեշտ ռեսուրսներից՝ մաս-նագիտորեն կատարելագործվելու, դասն ավելի հագեցած ու բովանդա-կալից անցկացնելու համար: «Արմաթ» լաբորատորիան ակտիվորեն գործում է՝ ներգրավելով բազմաթիվ աշակերտների: Դպրոցն ունի դպրոցական վեբկայք, ֆեյսբուքյան էջ, որտեղ արտացոլվում է դպրոցի ամբողջ գործունեությունը: Դպրոցի հաշվապահական գործընթացն իրականացվում է ՀԾ ծրագրի միջոցով: Մեծ թվով սովորողներ հաճա-խում են «Թումո կենտրոն» և մեդիագրագիտությունը զարգացնող այլ կենտրոններ: Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությանը, ուսուցման նոր ձևերի մշակմանը, ուսման որակի կատարելագործմանը: Կան ուսուցիչներ, որոնք տիրապետում են նաև հեռավար ուսուցման գործիքներին, կազմում են գիտելիքների	Դպրոցի համակարգիչներն ունեն նորացման ու թարմացման կարիք: Պրոյեկտորը հին է և կա նորի կարիք, չկա էլեկտրոնային գրարատախտակ: Ոչ բոլոր ուսուցիչներն ունեն մեդիագրագիտություն: Համակարգիչները տեղայնացված են միայն համակարգչային սենյակում:

ստուգում, թեստեր, գլուխկոտրուկներ, խաչբառեր և այլն Quizizz, LerningApps, Google Forms, Socrative, Kahoot գործիքների միջոցով: Ուսուցիչները կատարում են դասի պլանավորում Mind mup գործիքի միջոցով:	

Նպատակ 6

Նպաստել դասապրոցեսում և դասապրոցեսից դուրս նորարարությունների, կրթական այլ տեխնոլոգիաների և ՏՀՏ կիառությանը ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացմանը:

Խնդիր

ա)Սովորողների մոտ զարգացնել տեղեկատվական և հաղորդակցական կարողություններ:

բ)Սովորողներին մղել նախագծային, ստեղծագործական, հետազոտական, ինքնուրույն աշխատանք կատարելու և առաջացնել հետաքրքրություններ քննարկվող նյութի շուրջ:

գ) Խթանել և աջակցել ՀՊՉ-ով նախատեսված կրթության պահանջի իրականացմանը, այն է ոչ թե սովորողներին հնարավորինս շատ գիտելիքներ տալ, այլ սովորեցնել ինքնուրույն սովորել, ոչ միայն իմանալ, այլ նաև կարողանալ գործել ստացված տեղեկատվության հետ:

Գործողություն	**Ժամկետներ**	**Պատասխանատուներ**	**Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ**

1) Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում: **2)**Ուսուցիչների մասնագիտական որակների, շարունակական բարելավում և արդիականա-ցում, մեդիագրագիտության կարևորում ու զարգացում: **3**)Անվտանգ համացանցի կանոնների պահպանում, վերահսկողության իրականացում տանը և դպրոցում: **4**)Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան սովորողների մոտ զարգացնել նորի և նորարարության հանդեպ ճկունություն և գործողություններում հարմա-րվելու, զգացմունքները կառավարելու և ճիշտ տեղեկատվություն ընտրելու կարողություն: **5)**Հնարավորություն ստեղծել դպրոցում հեռավար կրթական ծառայությունների մատուցման, էլեկտրոնային պաշարներից օգտվելու, առցանց դասընթացներ կազմակերպելու համար: 6)Լուսաբանել և քննարկել e-draft.am կայքում դրված ակտերը:	2024-2029թթ 2024-2025թթ 2024-2026թթ 2024-2029թթ	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, մենթոր ուսուցիչներ, ԿԶՆԱԿ, ՏՄԱԿ, ՀՄԿ , մանկավար-ժական համակազմ տնօրեն, օպերատոր	ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀԿ-ներ, հիմհադրամներ լիազոր մարմին , բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր Համակարգչային դասասենյակ, նոր և նորացված ՏՀՏ-ներ:

Ռիսկեր

1)Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների և արտաբյուջետային միջոցների բացակայություն:
2)Համավարակ, արտակարգ դրություններ:
3)Ուսումնառության նկատմամբ հետաքրքրության նվազում, սովորողների թվի պակաս:
4) ՏՀՏ և նորարարությունների կիրառման նկատմամբ անտարբեր և ոչ հետևողական վերաբերմունք:

Ռիսկերը մեղմող գործողություններ

1)Դպրոցի առօրյայի ու թափանցիկ գործունեության լուսաբանումը սոցիալական ցանցերում և դպրոցի կայքէջում՝ որպես ընդունելության խթանման միջոց:
2)Հակահամաճարակային կանոնների պահպանում:
3)Կրթության որակի բարձրացում, կրթական մաիջավայրի բարելավում:
4)Ուսուցիչների վերապատրաստումների, սեմինարների մասնակցության, ՏՀՏ ոլորտի ինքնակրթության խրախուսում, ստեղծարարության ու նախաձեռնողականության խթանում:

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վելուծութնունը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր բնութագիրն է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը անհատի կրթական կարիքներին: Այն հնարավորություն է տալիս գնահատել առկա իրավիճակը, սահմանել նոր նպատակներ, գտնել նոր ուղիներ նպատակներին հասնելու համար, ապահովել ՀՊՉ-ով ասհմանված վերջնարդյունքները, անհրաժեշտության դեպ-քում վերացնել և շտկել թերությունները: Հանրակրթության պետական չափորոշչի փոփոխությունը ենթադրում է նախկին գիտելիքահեն կրթությունից անցում կարողունակահեն կրթության: Այս պարագայում ուսուցչի աշխատանքը դառնում է ավելի ընդգրկուն: Ուսուցիչը անընդհատ պետք է դասարան բերի սովորողներին հետաքրքրող նոր թեմաներ, գտնելու նոր լուծումներ և իրականաց-նելու նախագծային հետազոտական աշխատանքներ: Այն գիտելիքները, կարողությունները և հմտությունները, որ սովորողը ձեռք էր բերում իր ուսումնառության ընթացքում, նոր չափորոշչի ներդրմամբ կունենա կյանքում կիրառելու հմտություններ: Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ: Լինել կարողու-նակ նշանակում է, որ սովորողը որևէ բնագավառի մասին պետք է ունենա որոշակի գիտելիքներ, հմուտ լինի այդ բնագավառում գործունեություն ծավալելու, ունենա նաև արժեքային որոշակի համակարգ և կարողանա արտահայտել իր դիրքորքշումն այդ բնագավառի մասին:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Բոլոր ուսուցիչներն ունեն առարկայական թեմատիկ պլաններ, դասարան են մտնում օրվա դասի պլանով, կատարում են փոխադարձ դասալսումներ, քննարկումներ, վերլուծություններ: Օրվա դասի պլաններում սահմանված են դասի նպատակները, խնդիրները և վերջնարդյունքներին հասնելու ընթացքը և ուղիները: Ուսուցիչներն ակտիվորեն կիրառում են փոխներգոր-ծուն, համագործակցային մեթոդներ, ստեղծագործական մոտե-ցումներ: Ապահովում են հետադարձ կապը, գնահատման բնութագրիչների գործիքակազմը, քննադատական մտածողության զարգացումը: Գործում է ներդպրոցական վերահսկողության արդյունավետ համակարգ: Դպրոցում առկա են դասերի և տարաբնույթ միջոցառումների բարձր մակարդակ, շերտավորված	Կարողունակահեն կրթության կազմակերպման հմտությունների պակաս: Նախագծային ուսուցում կազմակերպելու դժվարություններ: Գնահատման օբյեկտիվության և բնութագրիչների կիրառման դժվարություններ:

աշխատանք, առարկայական դրվածքների և միամսայկների ուսումնասիրություն, ստուգարքների և ստուգիչ աշխատանքների ամփոփում, արդյունքների վերլուծություն և այլ աշխատանքներ: Դպրոցն ապահովում է նաև ուսուցիչների մասնագիտական աճը: Բուլինգի կանխարգելման հարցում ուսուցիչներն ունեն իրենց մեծ ազդեցությունը: Դպրոցում պարբերաբար անդրադառնում են խնդրին, քննարկում երևույթը, ձեռնարկում կանխարգելիչ գործողություններ: Ձևավորվել և գործում են ‹‹Հմուտ ձեռքեր››, ‹‹Ազգային երգ ու պար››, ‹‹Հեքիաթասացության››, խմբակներ: VII դասարանում իրականացվում են նախագծային աշխատանքներ, որի համար ուսումնական պլանի ընտրովի բաղադրիչից տրամադրվել է տարիֆիկացված ժամաքանակ: Նախագծի իրականացումը վերահսկում է դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների տեղակալը: Դպրոցում գործում է նաև երկարօրյա ուսուցման խմբակ II դասարանի աշակերտների համար:	

Նպատակ 7

Ապահովել Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կրթական տարբեր աստիճաններում սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:

Խնդիր

1) Ձևավորել ՀՊՉ պահանջներին համապատասխան կարողունակ քաղաքացիներ, ովքեր կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված:
2)Կիրառել նոր գնահատման համակարգը, օգտագործել բնութագրիչները, պահպանել օբյեկտիվության:
3) Ամենօրյա աշխատանքում զարգացնել առանցքային ութ կարողունակությունները, ապահովել վերջնարդյունքները:

Գործողություն	**Ժամկետներ**	**Պատասխա-նատուներ**	**Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ**

1)Կազմակերպել սեմինար–քննարկումներ չափորոշչային պահանջները յուրացնելու, նոր գործիքակազմը կիրառելու նպատակով, ուսուցիչների հաջողված արդյունքները ի ցույց դնել բոլոր մանկավարժներին: **2**)Կազմակերպել երկարօրյա ուսուցում ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար: **3**)Դպրոցում պահպանել սոցիալական արդարություն, առաջնորդվել մարդու իրավունքների պաշտպանության, կրթության բարձր որակի հավասար հասանելիության և մատչելիության սկզբունքներով: **4)**Մշտադիտարկումներ՝ վերջնարդյունքների ապահովման դիտարկում, մնացորդային գիտելիքի ստուգում, հայտորոշիչ և ստուգիչ աշխատանքներ: **5)**Դպրոցում զարգացնել նախագծային աշխատանքներ կատարելու, հետազոտական աշխատանքներ իրականացնելու կարողունակություններ: **6**)Սովորողների և մանկավարժների մոտ զարգացնել ճկունություն կրթական գործընթացում, առօրյա կյանքում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում օպերատիվ փոփոխությունների և արագ արձագանքման կարողունակություններ: **7)** Տարեկան թեմատիկ և օրվա դասի պլանավորում կատարելիս մղել ուսուցիչներին առաջնորդվել Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչով և ապահովել պահանջվող վերջնարդյունքները: **8)**Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը բարելավելու, գնահատում իրականացնելու և նոր նպատակներ պլանավորելու համար շարունակել կիրառել հետևյալ մեխանիզմները՝ ինտենսիվ դասալսումներ, տնօրինության կողմից ստուգիչ աշխատանքներ, չափորոշչային պահանջները բավարարող ինտեգրված, ցուցադրական, բաց դասեր, դասավանդման որակի գնահատում, նախագծային աշխատանք, ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունների վրա կատարել վերլուծություններ, մշակել նոր ռազմավարություն, խթանել սահմանված	2024-2029թթ 2024-2029թթ 2024-2025թթ 2024-2025թթ 2023-2028թթ	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, մենթոր ուսուցիչներ, տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ	ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀՄԿ, ՏՄԱԿ, ՀԿ-ներ, հիմհադրամներ Տարակարգի, կամավոր ատեստավորման, պարտադիր ատեստավորման նախատեսված գումարներ: Փորձառու ուսուցիչների փորձի փոխանակում, միասնական, համագործակցված աշխատանք բոլոր ոլորտներում: Մեթոդական ուղեցույցներ, ՏՀՏ միջոցներ, նյութատեխնիկական անհրաժեշտ բազա, մարդկային ռեսուրսներ, գրենական պիտույք, ուսումնաօժանդակ գրականություն, թեստեր, հարցաթերթիկներ, դասալսումների մատյան, ատլասներ, քարտեզներ, լաբորատոր նյութեր, բուկլետներ, ուղեցույցեր, տեղեկատվական կայքեր

պարտադիր խմբակներերի աշխատանքը ‹‹Առողջ ապրելակերպ››, ‹‹Մասնագիտական կողմնորոշում›› սովորողի կարիքներից ելնելով պլանավորել նորերը: **9**)Գործընկեր դպրոցների հետ համագործակ-ցելով կազմակերպել աշակերտական կոնֆե-բանսներ, նախագծային աշխատանքներ, փորձի փոխանակման տարբեր միջոցառումներ:			

Ռիսկեր

1)Ուսուցչի և դպրոցի նկատմամբ սխալ կարծրատիպերի ձևավորում:

2)Համավարակ, արտակարգ դրություններ:

3)Ուսումնառության նկատմամբ հետաքրքրության նվազում, սովորողների թվի պակաս:

4) Բուլինգն ու բռնությունը դպրոցում:

Ռիսկերը մեղմող գործողություններ

1)Կրթության որակի և կրթական միջավայրի բարելավում, վերջնարդյունքների ապահովում:

2)Առցանց, հեռավար ուսուցում:

3)ՀՊՉ-ով նախատեսված գրոծողությունների հետևողական իրականացում, նոր գնահատման համակարգի ներդրում:

4)Բուլինգի շղթայի բացահայտում, անհատական աշխատանք սովորողների, ծնողների և ուսուցիչների հետ:

5)Հալածանքի, բռնության, օտարման դեպքերի բացահայտում, կանխարգելիչ թիմային աշխատանքի կազմակերպում:

1.8 Բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցում առկա է բազմակարծիք, համընդհանուր ներառական մասնակցային բարենպաստ կրթական միջավայր: Դպրոցը պահում է սովորողների և աշխատակիցների կարծիքն ազատ արտահայտելու իրավունքն ու ազատությունը, զարգացնում է քննադատական մտածողություն ձևավորելու կարողունակություններ: Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ, կրթության հավասար իրավունքը, ինչպես նաև համընդհանուր ներառական կրթության քաղաքականությունը, որը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Սկսած 2019թ.-ից դպրոցն իրականացնում է համընդհանուր ներառական կրթություն: ԿԱՊԿՈՒ աշակերտների համար (4 աշակերտ) ստեղծված են հնարավորություններ իրենց կարողունակությունները զարգացնելու համար: Մշտապես աշխատանք է կատարվում ուսման որակը բարելավելու, աշակերտների գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը և արժեքային բաղադրիչը զարգացնելու ուղղությամբ՝ առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեությունը, ռազմահայրենասիրական, բարոյական դաստիարակությունն ամրապնդելու համար: Դպրոցն ուսումնասիրում է յուրաքանչյուր երեխայի վարքագիծը, սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա վարքագծի վրա՝ հենված ժողովրդավարական, ազգային արժեքների վրա: Դպրոցն օգտագործում է տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարներ ինչպես նաև անհատական մոտեցումներ, որպեսզի ապահովվի բոլոր երեխաների մասնակցայնությունը: Հաստատությունը հմտորեն տիրապետում է բուլինգի և բռնության դեպքերը բացահայտելու և կանխարգելու հմտություններին: Այստեղ հաշվի է առնվում յուրաքանչյուր երեխայի հույզերը, նախասիրությունները, տաղանդը: Արժեհամակարգային ուսումնադաստիարակչական հարթակում իրականացվում են հայրենասիրական, բնապահպանական, մեդիագրագիտության, մարդու իրավունքների և պարտականությունների, մասնագիտության կողմնորոշման տարբեր աշխատանքներ: Դպրոցն ակտիվ մասնակցում է տարածքային, մարզային հանրապետական օլիմպիադաներին, բայց հանրապետական օլիմպիադաներում հաղթողներ չենք ունեցել: Դպրոցն ակտիվ է նաև սպորտային միջոցառումներում և	Կան որոշ աշակերտներ, որոնք դուրս են մնում ծնողների վերահսկողությունից, տարված են համակարգչային խաղերով, բացակայում են անհարգի: Գերազանց սովորող աղջիկների թիվը առավել է տղաների թվից: Կա արտադասարանային ընթերցանության պակաս, երեխաները գրքի նկատմամբ հատաքրքրություն քիչ են ցուցաբերում: Սովորողների հետաքրքրությունը բնագիտական առարկաների նկատմամբ սակավ է: Քիչ թվով սովորողներ են մասնակցում առարկայական օլիմպիադային: Դպրոցում չկան բացառիկ կարողություններով աշակերտներ: Դպրոցում կան աշակերտներ, որոնք դժվարությամբ են ինտեգրվում շարջապատում :

մարզում գրավել ենք պատվավոր տեղեր: Դպրոցում կազմակերպվում են դասարանական, արտադասարանական, դպրոցական, արտադպրոցական բազմաթիվ նպատակային միջոցառումներ, որոնք ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում ճանաչողական ակտիվության, գեղագիտական ճաշակի ու մշակութային զարգացվածությանը, հայրենասիրական դաստիարակությանը: Հաստատության գրեթե բոլոր սովորողները տիրապետում են ՏՀՏ գործիքներին, բոլորն ապահովված են դասագրքերով: Մեծ թվով սովորողներ հաճախում են Թումո, մեդիագրագիտությունը բարելավող այլ կենտրոններ և զարգացման կենտրոններ: Դպրոցում կան օժտված և շնորհալի սովորողներ, ովքեր մասնակցում են տարբեր նախագծերի և ունեն գրանցած հաջողություններ: Դպրոցի առաքելությունն է դաստիարակել այնպիսի մարդիկ, որ յուրաքանչյուր սովորող լինի հասարակությանը պիտանի, ինքնուրույն կյանքին լիարժեք պատրաստված, արդյունավետ շարունակի կրթության հաջորդ աստիճանը և կարողանա անցնել արժանապատիվ գործունեության: Ակտիվ աշխատանք է տարվում ստեղծել սերունդ, որը իր մեջ կրում է մասնակցային մշակույթը և արժևորում յուրաքանչյուր անհատի դերը:	

Նպատակ 8

Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում, քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացու ձևավորում: **Դպրոցում բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային միջավայրի շարունակական կատարելագործում:**

Խնդիր

1) Ստեղծել այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժը համատեղ գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու և նպատակին հասնելու համար:
2)Դաստիարակել հայ, ով բազմազգ մոլորակում գիտակցի իր ազգային յուրահատկությունը ու մշակույթի բացառիկությունը և ձևավորել անհատականություն, ով կգիտակցի հայրենիքի և պետականության արժեքը, զարգացնել կամավորության, առաջնորդության, մասնակցայնության արժեքներ կրող քաղաքացիներ:
3) Իրականացնել նորարարական ծրագրեր կրթության որակի բարելավման , սովորողների հետաքրքրությունն ու սերը դեպի ուսումը խթանելու համար:

Գործողություն	**Ժամկետներ**	**Պատասխա-նատուներ**	**Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ**
1) Դպրոցում սահմանել վարքագծի նոր կանոններ, կանոնների կազմմանը մասնակից դարձնել բոլոր աշակերտներին: **2)** Մշտադիտարկման կենտրոնում պահել դպրոցի բարոյահոգեբանական միջավայրը, ուսուցչի բարձր էթիկան, մարդկային փոխհարաբերությունները: **3)** Դպրոցի կողմից բոլոր երեխաների նկատմամբ տածել սեր ու հարգանք, կատարելագործել համերաշխ, հանդուրժողական, բազմակարծիք, ներառական, մասնակցային կարթական միջավայրը:	2024-2025թթ 2024-2026թթ	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ	ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, հիմհադրամներ Շահարգրգիռ անձիք, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր,
4) Կրթական բոլոր սուբյեկտների՝ աշակերտ-ուսուցիչ-ծնող, համար ապահովել ազատ կարծիք արտահայտելու, հարցադրումներ, առաջարկություններ անելու միջավայր: **5)** Մշտադիտարկման միջոցով զարգացնելել սովորողների թիմում աշխատելու, որոշումներ կայացնելու, ընդհանուր նպատակին հասնելու կարողունակություններ: **6)** Սովորողների մասնագիտական կողնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում: **7)** Հանրակրթության պետական չափորոշչային պահանջներին համապատասխան նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների համար	2024-2027թթ	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ,	Տնօրինություն, մանկավարժական համակազմ, ՄԿԱ, ԴԱԿ, բազմամասնա-գիտական թիմ, ծնողներ, աշակերտներ մարդկային ռեսուրսներ,

լրացուցիչ աշխատանքների , երկարօրյա դասընթացի կազմակերպում: **8)** ԿԱՊԿՈՒ սովորողների համար խելացի հարմարությունների, վերաբերմունքի, սոցիալական ու ֆիզիկական միջավայրի բարելավում, անհատական ուսուցման պլանների միջոցով ուցուցման կազմակերպում, բարելավում: **9)**Ընթերցասրահի կահավորում, առանձին դասերի անցկացման, հետաքրքրությունը ուսման և ընթերցանության նկատմամբ խթանելու համար: **10**) Տարաբնույթ աշխատանքների միջոցով (նախագծային, հետազոտական, լաբորատոր, գործնական և այլ աշխատանքներ, ուսումնական ֆիլի դիտում, քննարկում, արշավներ, էքսկուրսիաներ, դպրոցական գիտաժողովներ, սեմինարներ, փոխներգործուն մեթոդներով դասեր) սովորողների հետաքրքրության խթանումը հանրակրթական առարկաների նկատմամբ: **11**) Համալրել ռեսուրս-կենտրոնը, գրադարանը նոր նյութերով , (զարգացնող խաղեր, մեթոդական ամսագրեր, պաստառներ, դիդակտիկ պարագաներ, էլեկտրոնային կրթական նյութեր, առարկայական, լրացուցիչ ծրագրեր և այլն): 9) Բացառել հալածանքի, օտարման, բռնության, բուլինգի դեպքերը:	2024-2025թթ 2024-2025թթ 2024-2026թթ 2024-2029թթ	տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ուսուցչի օգնական, հոգեբան, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ	Համագործակցային աշխատանք, արդյունավետության երաշխիք, արտաբյուջե

Ռիսկեր

1)Սովորողի մեկուսացումը և դպրոց-աշակերտ-ծնող կապի թուլացումը:
2)Համավարակ, արտակարգ դրություններ:
3)Ուսումնառության նկատմամբ հետաքրքրության նվազում, ուսուցիչների աշխատանքում անտարբերություն:
4) Հալածանքի, օտարման, բռնության, բուլինգի դեպքերը դպրոցում:
5)Մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարում:

Ռիսկերը մեղմող գործողություններ

1)Կրթության որակի և կրթական միջավայրի բարելավում:
2)Առցանց, հեռավար ուսուցում:
3)Ներդպրոցական վերահսկողության իրականացում:
4)Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, աշխատանք ծնողների հետ:
5)Մարդու իրավունքների և ազատությունների պահպանում:

1.9 Աշխատակազմի արժևորման խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցում և դպրոցից դուրս առկա է հոգատար, հարգալից, փոխվստահության ջերմ միջավայր, որտեղ պաշտպանվում են ուսուցչի իրավունքները, արժևորվում նրա անցած ճանապարհը և առկա գործունեությունը: Դպրոցում կազմակերպվում են մեծարանքի միջոցառումներ՝ նվիրված բազմավաստակ ուսուցիչներին: Դպրոցի կառավարման գործընթացում կարևոր տեղ ունի աշխատակազմի արժևորումը, խրախուսումը: Սահմանվել են անձնակազմի գործունեության խրախուսման հետևյալ ձևերը՝ պաշտոնական աճ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, կամավոր ատեստավորում, ինչպես նաև «Տարվա ուսուցիչ», «Տարվա դաստղեկ», «Տարվա նորարար», «Տարվա դասվար», անվանա-կարգերը, դրամական պարգևներ և շնորհակալագրեր: Դպրոցի տնօրինությունը հետևողական է ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացման բոլոր հարթակներում (սեմինարների և գիտաժողովների մասնակցություն, հետազոտական ստեղծագործական աշխատանքներ, հոդվածների մշակում և տպագրություն, բաց քննարկումներ, փորձի փոխանակում և այլն):	Դպրոցում կան նորից ու նորարարությունից խուսափող ուսուցիչներ: Նրանք չունեն ճկունություն և խուսափում են փոփոխություններ կատարելուց: Կա նաև ինքնավստահության պակաս ու անտարբեր վերաբերմունք:

Նպատակ 9

Աշխատակազմի արժևորման , խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների նոր գործիքների կիրառում:

Խնդիր

1)Կատարել մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրություն և վերլուծություն, **2)** Մշակել աշխատակազմի խրախուսման նոր ձևեր և մեթոդներ:

Գործողություն	**Ժամկետներ**	**Պատասխա-նատուներ**	**Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյու-թատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ**
1)Մանկավարժների համար դպրոցում ստեղծել խրախուսման մեխանիզմներ՝ կախված նրա ծավալած գործունեությունից և կատարած աշխատանքից: **2)**Գործածության մեջ դնել ինքնագնահատման հարցաթերթիկը, կատարել վերլուծություններ: **3)**Դպրոցի տեսանելի հատվածում ստեղծել աշխատակազմի խրախուսման, նվաճումների ու ձեռքբերումների պատ:	2024-2026թթ 2024-2025թթ	տնօրեն, Կառավարման խորհուրդ, հաշվապահ տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, մ/մ նախագահներ, տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ	ԿԳՄՍ, լիազոր մարմին, արտաբյուջե բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր,

Ռիսկերը

1)Չնախատեսված արտակարգ իրավիճակներ և անորոշություն:

2)Բյուջետային ֆինանսավորման անկայունություն և ֆինանսական միջոցների անբավարարություն: 3) Աշխատակիցների կողմից ինքնագնահատականի սուբյեկտիվություն:

Ռիսկերը մեղմող գործողություններ

1)Արտակարգ իրավիճակու աշխատելու հմտությունների զարգացում:

2) Դպրոցի բյուջեի ճիշտ և ժամանակին պլանավորում:

3) Ինքնագնահատման թերիթիկի լրացում և պաշտպանություն, հետադարձ կապի ապահովում:

Ուսուցիչների ինքնագանահատման հարցաշար

Սահմանված չափանիշներ	ամբողջությամբ 2 միավոր	Մասամբ 1 միավոր	չի կատար 0 միավոր
Տարեկան թեմատիկ պլանի կատարողական			
օրվա դասի պլանի առկայություն			
մատենավարության կանոնների պահպանում			
Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը դպրոցում և դպրոցից դուրս			
դասաժամի արդյունավետ օգտագործում, չափորոշչային պահանջների բավարարում			
համընդհանուր ներառականության ապահովում			
լրացուցիչ աշխատանք ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ			
դասի ընթացքում օգտագործվող դիդակտիկ նյութեր, ՏՀՏ միջոցներ, լրացուցիչ նյութեր, գրականություն			
ինքնակրթության թեմաներ 1) 2)			
հանձնարարականների պատշաճ կատարում			
բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միաջավայրի կատարելագործում			
բարեվարքության, հանդուրժողականության մթնոլորտի կատարելագործում			

Դասղեկի ինքնագնահատման հարցաշար

Սահմանված չափանիշներ	ամբողջությամբ 2 միավոր	մասամբ 1 միավոր	չի կատար 0 միավոր
դաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի կատարողական			
դասղեկի ժամի պլանի առկայություն			
դաստիարակչական աշխատանքների կազմակերպումը դպրոցում և դպրոցից դուրս			
դասարանի կառավարման որակը			
ծնողների հետ կատարվող աշխատանքներ, հետադարձ կապի ապահովում 1) 2)			
դասղեկական դասարանի կրթության որակի ապահովում			
դասարանական և արտադասարանական միջոցառում-ների կազմակերպում			
դասարանի մասնակցությունը դպրոցի հասարակական կյանքին, կամավորություն			
դասարանի կահավորում, գույքի, սանիտարա-հիգիենիկ կանոնների պահպանում			
Աշխատանք դժվար դաստիարակվող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, կրթությունից դուրս մնա-ցած սովորողների հետ:			

1.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Դպրոցը հիմնական և հաճախ միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից: ՀՀ Կառավարության որոշումով և ԿԳՄՍ նախարարի հրամանով դպրոցները 2023 թվականի սեպտեմբերից անցնելու են դասարան-թիվ ֆինանսավորման, ինչը նախատեսում է դպրոցի ֆինանսական վիճակի բարելավում: Չափազանց կարևոր է դպրոցի բյուջեի ճիշտ պլանավորումը և խնայողությունները, որոնց արդյունքում հնարավոր է որոշակի տնտեսումներ, որոնք կուղղվեն այլ առաջնային հարցերի լուծմանը: Ընթացիկ ծախսերն իրականացվում են օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ, չունի ֆինանսական պարտքեր: Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ ուղղությունները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցին ֆինանսավորումը տրամադրվում է ժամանակին, առանց ուշացումների: Դպրոցում կատարվում է ծախսերի արդյունավետ պլանավորում և բյուջետային հատկացումների նպատակային ծախսում: Յուրաքանչյուր ֆինանսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը, եռամսյան հաշվետվությունները հաստատվելուց հետո դրվում են դպրոցի կայք էջում: Դպրոցի ֆինանսական հնարավորությունների սահմաններում մշտապես ֆինանսներ են ուղղվում նյութատեխնիկական բազայով հագեցվածության բարձրացմանը, ՏՀՏ նոր միջոցների ձեռք բերմանը: Յուրաքանչյուր տարի ատեստավորման համար վերապատրաստվում է ուսուցիչների 20%-ը, որի նպատակով դպրոցի և վերապատրաստող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա կատարվում է վճարում:	Առկա ֆինանսական ռեսուրսները հնարավորություն չեն ստեղծում առաջնահերթ խնդրիների ամբողջական լուծման համար: Դպրոցը չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեության, ֆինանսական միջոցների աղության հետևանքով աշխատակիցները չեն ստանում դրամական խրախուսանք, պարգևատրումներ: Դպրոցը չի իրականացնում տարածքի վարձակալություն:

Նպատակ 10

Ունենալ ֆինանսատնտեսական գործունեության բազմակողմանի ուղղություններով գործողությունների պլան՝ իր մեջ ներառելով կրթության շահագրգիռ կողմերի:

Խնդիր

1)Մասնակցել դրամաշնորհային ծրագրերի,

2) խորացնել համագործակցությունը համայնքի և համայնքապետարանի հետ, հանդես գալ համատեղ ծրագրերով:

3)գտնել հովանավորներ:

Գործողություն	Ժամկետներ	Պատասխա-նատուներ	Գործողությունների կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ, նյու-թատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ
1)Ակտիվ մասնակցել պետբյուջեից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերի, դրամաշնորհներին: **2)**Իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: **3)** Դպրոցի տարածքը տրամադրել վարձակալական հիմունքներով:	2024-2029թթ 2024-2026թթ	տնօրեն, Կառավարման խորհուրդ, տեղակալ ուսումնական աշխատանքի գծով, ԴԱԿ, ՄԽ, ԾԽ, ԱԽ	ԿԳՄՍ, լիազոր մարմին, արտաբյուջե, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր

Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները՝

✓ Պետական բյուջե

✓ Արտաբյուջետային միջոցներ

✓ Դրամաշնորհներ

✓ Բարերարներ և նվիրատուներ

✓ Շրջանավարտներ

✓ Օրենքի շրջանակներում դպրոցում իրականացվող լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպման միջոցով լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ապահովում

Ռիսկերը

1)Լրացուցիչ ֆինասսավորվող ծրագրեր կազմելու, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մոտիվացիայի պակաս:

2)Համայնքի անտարբեր վերաբերմունքը:

3)Հովանավորների կողմից ներդրումներ կատարելու պասիվություն:

Ռիսկերը մեղմող գործողություն ներ

1)Դպրոցի բյուջեի ճիշտ և ժամանակին պլանավորում, արտաբյուջեի ձևավորում:

2)Գործընկերների և լրացուցիչ ֆինանսական ներդրումների ընդլայմանն ուղղված հետևողական աշխատանքներ:

3)Դպրոցի հեղինակության բարձրացում:

Հաշվետու ժամանակահատվածում հաստատության ուսումնական նպատակներով կատարված ծախսերի հաշվետվություն

2020թ.	Հաստատության հիմնանորոգում	Հայ կրթական հիմնարկություն
2021թ.	Համակարգիչների և նոր դպրոցական գույքի ձեռք բերում	Հայ կրթական հիմնարկություն
2023թ.	Դպրոցի խորանոցի վերանորոգում և գույքի ձեռք բերում	Բյուջետային միջոցներ

Ստորև ներկայացվում է բյուջեի տարեկան ծախսերի մասին տեղեկություն

2020թ

Գրասենյակային, էներգետիկ, կենցաղային և այլ ծախսեր	4.115.1
աշխատավարձ	38.074.6
ընդամենը	42.189 .7

2021թ

Գրասենյակային, էներգետիկ, կենցաղային և այլ ծախսեր	5.353.4
աշխատավարձ	39.534.0
վերապատրաստում	120.0
ընդամենը	45.007.4

2022թ

Գրասենյակային, էներգետիկ, կենցաղային և այլ ծախսեր	7.291
աշխատավարձ	40.323.2
վերապատրաստում	96.0
կամավոր ատեստավորում	370.0
ընդամենը	48.945.2

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎ

Սեպտեմբերի 1-ի դրությամբ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Աշակերտ թիվ	144	157	200	201	226

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Ուստարի	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Ընդհանուր առաջադիմություն	100%	100%	100%	100%	100%
Որակական առաջադիմություն	58%	60%	63%	65%	65%

2023Թ
- 201 ԱՇԱԿԵՐՏ

2028Թ
- 250 ԱՇԱԿԵՐՏ

3. Հաստատության գործունեությունը

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխա-վոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուց-ման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատա-կաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համա-մարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնա-կան դպրոց» ՊՈԱԿ - ի զարգացման 2024–2029 թթ. ծրագիրի հիմքում ընկած է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, Կրթակարգ, «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվական զարգացման պետական ծրագրը» և Հանրակրթության պետական չափորոշիչը: Հաշվի են առնվել նաև մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները, սովորողների, ծնողների մոտեցումները, դպրոցում առկա հիմնախնդիրները և Արթիկ քաղաքի առանձնահատկությունները: Ծրագիրն ուղղված է դպրոցի աստիճանական զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունը, որոնք ուղղակիորեն բխում են դպրոցի գործունեու-թյունից: ‹‹Արթիկի N 4 հիմնական դպրոց›› ՊՈԱԿ-ի զարգացման 2024-2029թթ. ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները: Ծրագրի առանցքային գաղափարը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որը պետք է ծառայի սովորողի գիտելիքի, հմտության, դիրքորոշման և արժեքային բաղադրիչի զար-գացմանը: Դպրոցը նպատակ ունի սովորողի համար դառնալու այն տեղը, որտեղ նա իրեն լավ է զգում և հարմարավետ պայմաններ կան կենսագործունեության համար: Ժամանակակից դպրոցից պա-հանջվում է ձևավորել սովորող և սովորեցնող անձ, նրա մոտ զարգացնել այնպիսի անձնային որակներ, որոնք կկարողանան ապահովել սովորողի շարունակական ուսումը, ստեղծել նպաստավոր և տրամադրող պայմաններ հետազոտական գործունեության, նախագծային աշխատանքներ ստեղծելու համար, նպաստել սովորողների ինքնաճանաչմանը, երաշխավորել սովորողների ազատությունը՝ հաշվի առնելով նրա նախասիրություններն ու կարողությունները: Հանրակրթություն իրականացնող յուրաքանչյուր հաստատություն պետք է մեծ ուշադրություն դարձնի սովորողների ՀՊՉ-ով սահմանված կարողունակությունների, քննադատական և վերլուծական մտածողության ձևավորման և զարգացման

վրա: Այսօր Հայաստանի Հանրապետությունը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Այս պայմաններում առանձնակի կարևորվում է կրթության ոլորտը՝ որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը:

ա)Կրթական կարիքների բավարարում

Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը: Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: ա) հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպել դասապրոցեսների (ուսումնական նախագծերի և ուսումնական խմբակների) նպատակային ժամանակակից մանկավարժական մոտեցումներով, բ) յուրաքանչյուր սովորողի համար անկախ ազգությունից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքից և այլ առանձնահատկություններից կրթության հավասր իրավունքով համընդհանուր ներառական կրթության կազմակերպում մանկավարժական նպատակային մոտեցումներով,
գ) ժամանակակից կրթական ծրագրերի ներդնում՝ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան, որոնք կնպաստեն սովորողների կարողունակությունների ձեռք բերմանը,
դ) նպատակային և անհատական մոտեցում յուրաքանչյուր սովորողի համար,
ե) գնահատման ռազմավարական համակարգերի ներդրում:
Դպրոցը նախատեսված է 600 աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները.

1.**Տարրական ընդհանուր** - սահմանային թիվ 200, լիցենզիա Ա N0908, առկա սովորող՝ 113:
2.**Հիմնական ընդհանուր** - սահմանային թիվ 400, լիցենզիա Ա N0903, առկա սովորող՝100: Դպրոցը դաստիարակում է ազատ անհատներ՝ անցում կատարելով գիտելիքահեն կրթությունից կարողունակահեն կրթության, և սույն զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողի հետևյալ կրթական կարիքները.

- ✓ կարողունակ
- ✓ համամարդկային և ազգային արժեքներ կրող
- ✓ հայրենասեր և ազգասեր
- ✓ բազմակողմանի զարգացած և շրջահայաց

- ✓ սեփական դիրքորոշում ունեցող
- ✓ մասնագիտորեն կողմնորոշված
- ✓ մրցունակ
- ✓ մեդիագրագետ
- ✓ ժամանակին համահունչ քայլող:

Բարենպաստ կրթական միջավայրում ուսուցումն և ուսումնառությունը նպատակաուղղված են սովորողի մտավոր, ստեղծագործական, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, մարդկային արժանապատվության պահպանմանը, 21-րդ դարի կարողունակ քաղաքացու ձևավորմանը: Դպրոցի առաքելությունը պետք է բավարարի սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության և դաստիարակության որակի բարձրացում և շարունակական զարգացում, ստեղծելով հատուկ պայմաններ ԿԱՊԿՈՒ սովորողների համար և նպաստելով յուրաքանչյուր սովորողի որոշակի ոլորտում ինքնահաստատվելու և հաջողակ դառնալու:

«Արթիկի N 4 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի զարգացման 2024-2029 թթ. ծրագիրը նախատեսում է ցանկալի ապագայի մտապատկեր, որը ենթադրում է հետևյալ վերջնարդյունքը՝

1)Դպրոցում առողջ սոցիալ-հոգեբանական, ստեղծագործ, մոտիվացնող կրթական միջավայրի ապահովում, որի արդյունքում յուրաքանչյուր սովորող կունենա հավասար կրթական հնարավորություններ՝ անկախ իր ընդունակություններից ու կարողունակություններից, որտեղ սովորողը կկարողանա դրսևորել իր հմտությունները, ներուժը:

2)Կրթված ու դաստիարակված այնպիսի սերունդ, որը կլինի ժամանակի պահանջներին համապատասխան և ապագայի մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ:

3)Կրթական բոլոր աստիճաններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքի ապահովում:

4) Կրթության մեջ ոչ միայն գիտելիքի այլև կարողունակությունները ձևավորում և կարևորում, որը սահմանվում է Հանրակրթության պետական չափորոշիչով:

5) Հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ լինի շարունակաբար գիտելիքներով ու նորարարու-թյուններով զինվելու պատրաստ, համագործակցող, ստեղծագործ, հոգատար, սրտացավ:

6) Սովորողների առողջության պահպանում և զարգացում, նյութատեխնիկական բազայի հարստացում:

7)Կրթության կազմակերպման մասնակիցների ինֆորմացիոն մշակույթի զարգացում:

Հաստատության կառավարումն ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների մշակմանն ու արդյունավետ իրագործմանը:

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքները հանդիսանում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացները, իրականացվում են ուսուցչամանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական և դաստիարակության գործընթացները, այնպես էլ դպրոցական և արտադպրոցական տարաբնույթ աշխատանքներն ու միջոցառումները:

Վարչատնտեսական գործունեությունը պլանավորվում է դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման արդյունքում, այն ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանն ու զարգացմանը:

ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատանքներն իրականացվում են դպրոցի մանկավարժների, ուսուցչի օգնականի և ծնողների գործուն ներգրավվածությամբ և Արթիկի ՏՄԱԿ-ի հետ համագործակցությամբ:

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորվում է հանրակրթության ոլորտի օրենսդրությամբ և արտացոլում է պետության կրթական քաղաքականության միտումները՝ ձևավորելով պետության ու համայնքի զարգացմամբ մտահոգ ու նախաձեռնողական սերունդ: Դպրոցի կրթական գործընթացի զարգացումը տեղի է ունենում պետության կրթական քաղաքականության միտումներին համահունչ: Ըստ զարգացման ծրագրի՝ դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը, ով կներկայացնի ընտանիք, սերունդ, քաղաք, երկիր, պետություն: Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի , այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է: Դպրոցը համագործակցում է և շարունակելու է համագործակցել տարածքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, շահառու խմբերի հետ: Կարևոր է նաև ապահովել համայնքի ներգրավվածությունը համագործակցության և փոխվստահության ակնկալիքով կրթության որակի բարելավման գործում: Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվում տարբեր կազմակերպությունների, պետական կառույցների աշխատակիցների հետ սովորողների համար ավելի լայն հնարավորություններ բացելու և մասնա-

գիտական ոլորտներին ծանոթացնելու համար: Դպրոցն աջակցում է համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը՝ համատեղ շաբաթօրյակներ, ծառատունկ, տոնակատարություններ, հանդիպումներ և մրցույթներ: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես՝ բաց դասեր, ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր, նշանավոր մարդկանց հետ հանդիպումներ և այլն: Կարևորում եմ դպրոցի համագործակցությունը նաև այլ կրթական հաստատությունների հետ, որի ընթացքում կատարվում է փորձի փոխանակում, նորի և նորարարությունների յուրացում, սոցիումին ինտեգրում: Սերտ է դպրոցի և ծնողների միջև կապերը:Մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության նկատմամբ ձևավորում է միասնական պահանջներ: Ծնողական համայնքը մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանը: Դպրոցն ակտիվ համագործակցում է կրթության կառավարման մարմինների՝ ԿԳՄՄՆ, ԿԶՆԱԿ, ԿՏԱԿ, ինչպես նաև շահառու այլ կազմակերպությունների հետ՝ Արթիկի պետական քոլեջ, Արթիկի բժշկական քոլեջ, Արթիկի ավագ դպրոց և այլ ուսումնական հաստատություններ,Արթիկի քաղաքային գրադարան, Գիտության և մշակույթի ռուսական կենտրոն, Մատենադարան, ԾԻԳ և այլն: Նախատեսվում է զարգացնել մինչ այժմ ձեռք բերված համագործակցությունները տարբեր կառույցների հետ, պարբերաբար հանդիպումներ ու այցեր կազմակերպել հոգևոր-մշակութային, սոցիալական ու զարգացման կենտրոններ, համգործակցություն ձեռք բերել նաև հասարակական, ռազմահայրենասիրական, բնապահպանական, բարեգործական կազմակերպությունների հետ:

գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Հաստատության ենթակառուցվածքներն ու հնարավորությունները

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական տարրական և հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Արթիկի N4 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1961 թվականին: Տվյալ շենքում դպրոցը տեղակայվել է 1987 թվականին: ՀՀ Շիրակի մարզի ‹‹Արթիկի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությանունը հաստատվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արթիկի տարածքային բաժնի կողմից: Վկայական N 15.210.00444: Դպրոցն օգտվում է իրավաբանական անձի իրավունքից, ունի զինանշանով կլոր կնիք, ձևաթղթեր: Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ: Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Շիրակի մարզպետի 21.11.2017-թ.-ի 319-Ա որոշմամբ: Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը՝

կանոնակարգվող իրավական ակտերը, դպրոցի կանոնադրությունը, տեղայնացված օրինակելի իրավական ակտերը, ներքին իրավական ակտերը: Դրանք վարվում են համապատասխան կարգերի պահանջներին:

Հաստատության հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Արթիկ , Հակոբյան 8: Հաստատության ինտերնետային կայքի հասցեն – artik4@schools.am, դպրոցի վեբկայք՝ artik4.schoolsite.am: Դպրոցական շենքը տիպային է, բաղկացած երեք մասնաշենքերից, օգտագործվում է ամբողջությամբ: Ուսումնական հաստատությունն ունի 10.000 քմ տարածք, որից 5160 քմ պատկանում է

դպրոցական շենքին: Դպրոցն ունի 10 դասարան: Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, շուրջօրյա ջրամատակարարմամբ: Դպրոցում սովորում են 214 աշակերտներ: Ուսումնական պարապմունքներն անցկացվում են միահերթ, 5-օրյա աշխատանքային շաբաթով: Դպրոցում 2010 թվականից մեկնարկել է ՄԱԿ-ի ՊԶԾ կողմից կազմակերպած «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս դպրոցի տարրական դասարանների աշակերտներին ապահովել առողջ, տաք սնունդով, հաղթահարել աղքատությունը, բարձրացնել դպրոցականների հաճախելիությունը: 2018 թվականի սեպտեմբերից «Տաք սնունդ» ծրագիրը իրականացվում է պետբյուջի ֆինանսավորմամբ: Դպրոցն ակտիվորեն է մասնակցում երգի–պարի, ասմունքի, մրցույթ-փառատոններին, տարբեր օլիմպիադաներին, սպարտակիադաներին, «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված մրցույթներին. մաթեմատիկայից՝ «Կենգուրու», մայրենիից՝«Մեղու», ռուսերենից՝ «Ռուսական արջուկ»:

Դպրոցի շենքային պայմանները

անվանում	քանակ
դասասենյակ	23
ուսուցչանոց	1
աշխատասենյակ / կաբինետ	4
ռազմագիտության կաբինետ	1
համակարգչային սենյակ	1
գրադարան	1
ուսուցչի օգնականի սենյակ	1
հոգեբանի սենյակ	1
տեխնոլոգիայի կաբինետ	1
հանդիսությունների դահլիճ	1

ճաշարան	1
սպորտդահլիճ	1
մարզահրապարակ	1
հաշվապահի սենյակ	1
բուժկետ	1
պահեստ	2
նկուղ	1
ապաստարան	1
սանհանգույցներ	12

Հաստիքացուցակ

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիքային միավորների քանակ /դրույք/
1	տնօրեն	1
2	վարչատնտեսական համակարգող	1
3	տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով	0,75
4	ՄԿԱ համակարգող	0,75
5	զինղեկ	1
4	հաշվապահ	1
6	քաղպաշտպանություն	0.3
7	ԴԱԿ	0,75
8	ուսուցչի օգնական	1,5
9	հոգեբան	0,75
10	Էլեկտրոնային կառավարման դասավանդման ապահովման մասնագետ	0,75
11	գրադարանավար	1
12	հավաքարար	2
13	նորոգող բանվոր	0,75

14	հնոցապան	2
15	խոհարար	2
16	պահակ	3

Մանկավարժների տարիքային կազմը

20 - 30 տարեկան	4 ուսուցիչ
31 - 40 տարեկան	9 ուսուցիչ
41 - 50 տարեկան	5 ուսուցիչ
51 - 60 տարեկան	4 ուսուցիչ
61 և ավել	6 ուսուցիչ

Մարդկային ռեսուրսներ և հնարավորություններ

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և սովորողների համապատասխան կրթություն ստանալու մատչելիությունը: Այս առումով անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավմանը: Փորձառու մանկավարժական համակազմը, մասնակցային և համագործակցային աշխատանքը, համընդհանուր ներառական կրթության իրականացումը, շարունակական, սեմինարները, վեբինարները, վերապատրաստումները, դպրոցում ձևավորված գեղեցիկ ավանդույթները միտված են կրթության որակի բարելավմանը: Դպրոցն ունի 213 աշակերտ, որոնցից 4 ԿԱՊԿ ունեցող: Դպրոցն ունի 44 աշխատակից, որոնցից 4-ը՝ վարչական, 7-ը՝ մանկավարժական, 10-ը՝ ուսումնաօժանդակ աշխատողներ: Ուսուցիչները 24-ն են, 19-ը բարձրագույն մասնագիտական, 1-ը միջին մասնագիտական որակավորմամբ: 1 ուսուցիչ ունի առաջին աստիճանի տարակարգ: 4 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեսավորմանը և ստամում են հավելավճար: 1ուսուցիչ 2017 թ-ին ճանաչվել է «Տարվա լավագույն ուսուցիչ»: Դպրոցում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական

գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարա-հիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություն-ներ: Դպրոցում կա ուսուցչական անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայր: Սահմանվել են նաև հետևյալ խրախուսման միջոցները «Տարվա ուսուցիչ» «Տարվա դասղեկ» անվանակարգերը, դրամական պարգևներ և շնորհակալագրեր՝ դպրոցը լավագույնս ներկայացնելու, հայրենիքի պաշտպա-նությանը մասնակցած շրջանավարտներին՝ դպրոցի սերմանած հայրենասիրական դաստիարակությանը հավատարիմ մնալու և հայրենիքի հանդեպ պարտքը պատվով կատարելու համար, ինչպես նաև բարե-բար շրջանավարտներին, որոնք մասնակցել են ավելի հարմարավետ կրթական պայմաններ ստեղծելուն: Դպրոցի անձնակազմի արժևորման և խրախուսման նպատակով նախատեսվում է կատարողականի հիման վրա բազմաչափ նոր համակարգի ներդրում, որի հիմքում ընկած կլինեն աշխատողի ինքնա-կրթությունը, մասնագիտական զարգացումը, նախագծային աշխատանքների որակը, տարբեր միջոցա-ռումների կազմակերպումը և նախաձեռնողականությունը գնահատող չափանիշներ, ինչպես նաև սովո-րողների գրանցած արդյունքները տարբեր մրցույթներում: 2024-2029 թթ. դպրոցի խնդիրներից է նպաստ-ել հնարավորինս շատ ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցելուն և տարակարգ ձեռք բերելուն: Ուսումնական հաստատության կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները, որոնք գործում են օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում.

1)կառավարման խորհուրդ,

2) մանկավարժական խորհուրդ

3) ծնողական խորհուրդ,

4) աշակերտական խորհուրդ

Դպրոցի նպատակն է մինչև 2029 թվականը դառնալ ժամանակի զարգացող պահանջներին համապատասխան կրթություն ապահովող և կրթական բոլոր բնագավառներում հաջողություններ գրանցող առաջատար հանրակրթական հաստատություն ՀՀ-ում:

3. Զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ

	4	3	2	1
Գնահատման ենթակա ոլորտը	գերազանց	լավ	բավարար	անբավարար

Ոլորտ 1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների, ենթակառուց-վածքների և տարածքի արդիականացում, բարելավում	Աշխատանքները կատարվե են ամբողջ ծավալով	Աշխատանքները կատարվել են նախատեսվածի 70-60%-ի չափով	Աշխատանքները կատարվել են նախատես-վածի 40-30%-ի չափով	Աշխատանք-ները չեն կատարվել
Ոլորտ 2 ՈԻսումնական հաստատության նյութատեխնիկակա ն բազայի ձեռք բերում, հարստացում	Ամբողջությամբ ձեռք է բերվել նախատեսված գույք	Նախատեսված գույքը ձեռք է բերվել 70- 60%-ի չափով	Նախատեսված գույքը ձեռք է բերվել 40-30%-ի չափով	Նախատես-ված գույքը ձեռք չի բերվել:
Ոլորտ 3 Համագործակցությա ն ընդլայնում հաստատության կառավարման մարմինի հետ	Տնօրենի և կառավարման մարմնի միջև առկա է ակտիվ համագործակցություն, նիստերն անց են կացվում ըստ կարգի,առկա են կառուցողական և արդյունավետ հարաբերություններ, մշակվում են համատեղ ծրագրեր, բոլոր որոշումները ընդունվում են համատեղ:	Տնօրենի և կառա-վարման մարմնի միջև առկա է համագործակցություն, նիստերը հիմնականում անց են կացվում, երբեմն անդամները բացակայում են, որոշումներն ընդունվում են համատեղ:	Տնօրենի և կառավարման մարմինի միջև առկա է ոչ սերտ համագործակ-ցություն, նախա-ձեռնող կողմը հիմնականում տնօրենն է , նիստերն անց են կացվում թերա-ցումներով, կա-ռավարման խորհուրդը քիչ դեր ունի որո-շումների ըն-դունման մեջ:	Տնօրենի և կա-ռավարման մարմինի միջև չկա համագոր-ծակցու թյուն, վստահություն և հարգանք, նիստերը չեն անցկացվում կամ կրում են ձևական բնույթ, բոլոր որոշում-ներն ընդուն-վում են տնօրե-նի կողմից:
Ոլորտ 4 Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնա-դաստիարակչական աշխատանքների	Դպրոցում իրականացվել են մանկավարժական համակազմի մասնագիտական որակների և սովորող-ների դաստիարակու-թյան, կրթության,	Դպրոցում իրականացվել են մանկավարժական համակազմի մասնագիտական որակների և սովորողների	Դպրոցումում իրականացվել են մանկավարժա-կան համակազմի մասնագիտական որակների և սովորողների	Դպրոցում մանկավար-ժական համա-կազմի մասնա-գիտական որակների կատարելա-

ազդեցությունը	առաջադիմության բարձրացմանն ուղղված տարաբնույթ միջոցառումներ, որոնք ապահովել են մանկավարժական համակազմի ակադեմիական, մեթոդ-մանկավարժականական որակների զարգացումը, սովորողների որակական առաջընթացը, կարողունակությունների ձևավորումն ու զարգացումը:	դաստիարակության, կրթության, առաջադիմության բարձրացմանն ուղղված բավարար միջոցառումներ, որոնք նկատելի ազդեցություն են ունեցել կրթության որակի, դաստիարակության և առաջադիմության վրա:	դաստիարակության, կրթության, առաջադիմության բարձրացմանն ուղղված խիստ սահմանափակ միջոցառումներ, որոնք ունեցել են աննշան ազդեցություն կրթության որակի վրա:	գործման և սովորողների դաստիարակության, կրթության, առաջադիմության բարձրացմանն ուղղված միջոցառումներ չեն իրականացվել:
Ոլորտ 5 Դպրոցում բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում	Դպրոցում երաշխավորված են մարդու իրավունքների պաշտպանությունը, ուսումնական գործընթացում բոլոր սովորողների ներառականությունը, բազմակարծությունը, ձևավորված է մասնակցային միջավայր, սովորողների համար ինքնահաստատման և ինքնադրսևորման նպաստավոր պայմաններ, խթանվում է ազգային և համամարդկային արժեհամակարգը: ԿԱՊԿ ունեցող երեխաները ներգրավված են ուսումնական գործընթացում:	Դպրոցում այլակարծությունը սահմանափակող և սովորողների իրավունքները ոտնահարող դեպքեր հազվադեպ են լինում: Երբեմն նկատվում է մեկուսացում: ԿԱՊԿունեցող երեխաները ընդհանուր առմամբ ներգրավված են ուսումնական գործընթացում:	Դպրոցում սահմանափակված է այլակարծությունը, մարդու իրավունքների և շահերի պաշտպանությունը, կան համընդհա-նուր ներառա-կան միջավայի խնդիրներ, սովորողի պատկերացումները ազգային և համամարդկային արժեքների մասին թույլ են:ԿԱՊԿունեցող երեխաները մեկուսացված են ուսումնական գործընթացից:	Դպրոցում այլակարծություն և սովորողների իրավունքների ու շահերի պաշտպանություն երաշխավորված չէ, ներառական և մասնակցային արժեքային միջավայր ձևավորված չէ:
Ոլորտ 6 Դպրոցում անձնակազմի արժեորման խրախուսման և ինքնակրթության միջավայրի	Անձնակազմի արժեորումն ու խրախուսումն իրականացվում է գնահատման չափանիշների հիման վրա՝ (ինքնակրթություն,	Անձնակազմի արժեորումն ու խրախուսումն առկա է և իրականացվում է որոշակի գնահատման չափանիշներով, սակայն	Անձնակազմի խրախուսման համակարգը երբեմն չի գործում, առկա է ինքնակրթության ոչ բավարար	Գնահատման չափանիշների հիման վրա խրախուսում չի իրականացվում:

ձևավորում	մասնագիտական զարգացում, տարբեր միջոցառումներ, ստեղծարարություն և նախաձեռնողականությունը սովորողների գրանցած հաջողությունները):	աշխատողները դրան վերապահումով են մոտենում, դպրոցում առկա է անձնակազմի ինքնակրթության համար բարենպաստ միջավայր:	պայմաններ: Անձնակազմը մոտիվացված չէ նախաձեռնություն ներ կատարելու:	
Ոլորտ 7 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների և գործընկերների հետ	ՏԻՄ-Ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների և գործընկերների հետ ձևավորված է մշտական կապ: Համագործակցությունը բազմաբնույթ է և արդյունավետ, ծնողական համայնքն ակտիվ ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում:	ՏԻՄ-Ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների և գործընկերների հետ հիմնականում առկա է համագործակցային արդյունավետ հաաբերություններ, գործընկերները երբեմն հանդես են գալիս նախաձեռնություններով, ծնողական համայնքը ակտիվ է, բայց ընդգրկված է ուսումնադաստիարակչական աշխատանքներում:	ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների և գործընկերների հետ առկա է սահմանափակ համագործակցություն, նախաձեռնող կողմը դպրոցն է, ծնողները ուսումնական գործընթացում ունեն նվազ մասնակցություն:	ՏԻՄ-Ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների և գործընկերների հետ չկան համագործակցային հարաբերություններ:
Ոլորտ 8 Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման ապահովում:	Գեղագիտական ճաշակի բարձրացման, աշխարհայացքի ընդլայնման նպատակով սովորողների հետ մշտապես տարվում են արտադպրոցական աշխատանքներ՝ ներգրավելով նաև ծնողներին: Դպրոցում առկա են երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորություններ, որը բխում է ՀՊՉ-ից և համապատասխանում է սովորողի կարիքին:	Արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են ոչ միշտ , երբեմն ներգրավվում են նաև ծնողներին: Դպրոցում առկա են երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորություններ, որը ոչ միշտ է իրականացվում և համապատասխանում է սովորողի կարիքին:	Արտադպրոցական աշխատանքները կազմակերպվում են հազվադեպ, երբեմն ներգրավվում են նաև ծնողներին: Դպրոցում առկա են երկարօրյա ուսուցման ապահովման սահմանափակ հնարավորություն-ներ, որը ոչ միշտ է համապատասխանում սովորողի կարիքին;	Սովորողների հետ արտադասարանական աշխատանքներ չեն իրականացվում և չկա երկարօրյա ուսուցման հնարավորություններ:

Ոլորտ 9 Դպրոցում հալածանքի օտարման և բռնության կանխարգելում:	Դպրոցում բացառված են հալածանքի բռնության և օտարման դեպքերը, առկա է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Յուրաքանչյուր սովորող գիտի իր իրավունքներն ու պարտականությունները, հարգում է դիմացինին: Առկա է հանդուրժողականության ու համերաշխ մթնոլորտ: Կազմակերպվում են պատասխանատու վարքի և գործունեության ձևավորմանը ուղղված տարաբնույթ քննարկումներ, միջոցառումներ:	Դպրոցում հալածանքի բռնության և օտարման դեպքեր հազվադեպ են լինում: Այս դեպքում բացահայտվում է կատարվածի շղթան և իրականացվում կանխարգելիչ գործողություններ: Ընդհանուր առմամբ բարոյահոգեբանական մթնոլորտն առողջ է: Յուրաքանչյուր սովորող գիտի իր իրավունքներն ու պարտականությունները, հարգում է դիմացինին: Երեխաները մասնակցում են պատասխանատու վարքի ձևավորմանն ուղղված տարաբնույթ միջոցառումներին:	Դպրոցում հալածանքի բռնության և օտարման դեպքեր հաճախակի են լինում: Երբեմն չի հաջողվում կատարել կանխարգելիչ գործողություններ: Սովորողները մասամբ են տիրապետում իրենց իրավունքներին ու պարտականություններին:	Դպրոցում հալածանքի, օտարման և բռնության դեպքեր մշտապես առկա են, կանխարգելման միջոցառումներ չեն իրականացվում: Խաթարված է դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը:
Ոլորտ 10 ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացում	Դպրոցում ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացմանն ուղղված բոլոր միջոցառումները ամբողջությամբ իրականացվել են, սովորողների և մանկավարժների շրջանում ձևավորվել են հեռավար գործիքներին տիրապետման բարձր մակարդակ:	Դպրոցում ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են որոշ միջոցառումներ, որոնք ապահովել են սովորողների և մանկավարժների շրջանում տիրապետման հնարավորությունների բավարար առաջընթաց:	Դպրոցում ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացմանն ուղղված իրականացվել են խիստ սահմանափակ միջոցառումներ, որոնք ուսումնական գործընթացի վրա ազդեցություն չեն ունեցել:	Դպրոցում ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացման միջոցառումներ չեն իրականացվել:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են՝

մարդկային ռեսուրսներ- Առողջ սովորողներ, մասնագիտական որակներին համապատասխան մանկավարժներ, աշխատանքի կառավարումը և ղեկավարումը իրականացնող վարչական անձնակազմ, հոգատար ծնողներ,

նյութական ռեսուրսներ- տեղեկատվական տեխնոլոգիաներ, լաբորատոր սարքավորումներ, նյութեր՝ այդ թվում էլեկտրոնային, ՀՊՉ-ներ, առարկայական ծրագրեր, դասագրքեր

ֆինանսական ռեսուրսներ- պետական բյուջեից ստացվող գումարներ, դրամշնորհային ծրագրեր, բարեգործական ներդրումներ:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր տարվա համար կազմվելու է ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, որտեղ հստակ արտահատվելու են պլանավորած վերոնշյալ գործողությունները: Զարգացման ծրագրի իրականացման համար պատասխանատուների կողմից յուրաքանչյուր կիսամյակ ներկայացվելու են հաշվետվություններ:

- Յուրաքանչյուր գործողության համար մշակված են վերահսկողության մեխանիզմներ, որոնք հաստատվում են դպրոցի Կառավարման խորհրդի կողմից:
- Յուրաքանչյուր գործողության համար սահմանված են հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը, որոնք հաստատվում են դպրոցի Կառավարման խորհրդի կողմից:
- Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից՝ տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրու-թյուն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Ն Շ Ու Մ

Ուսումնական հաստատության շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան						
Դպրոցի տարածքի, ցանկապատում, դպրոցամերձ այգու բարեկարգում, այն օգտագործել հանգստի և ուսումնական նպատակով: Թեքահարթակների պատրաստում: Առարկայական կաբինետների, ընթերցասրահի ձևավորում և կահավորում, հարմարավետ և մոտիվացնող միջավայրի ապահովում:	Հարմարավետ և բարեկարգ մրջավայր, հետաքրքիր և առողջ ապրելակերպին նպաստող դասեր: Հրապուրիչ և որակյալ կրթական միջավայր: Վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած առաջատար դպրոց:	2024-2026 2024-2026 2024-2028	Ներկայացնել հայտ և պահանջարկ վարչատնտեսական համակարգողին հետագա գործընթացը կազմակերպելու համար: Նպաստել սովորողների գիտական ներուժի զարգացմանը, հարստացնել լաբորատորիաները և գրադարանը:	Արտակարգ իրավիճակներ	Դպրոցի զարգացմանն ուղղված գործողությունները պարբերաբար պետք է վերանայել՝ ելնելով պետության քաղաքականությունից և շահառու խմբերի կարիքից, փոփոխություններն ու լրացումները կկատարվեն տնօրենի տարեկան աշխատանքային պլանում և զարգացման ծրագրում:	Ներքին գնահատման հաշվետվություն
Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ						
Հասարակական և բարեգործական ընկերությունների հետ համագործակցության ընդլայնում: Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում: Համայնքի ներկայացուցիչների և ծնողների հետ համատեղ բարեգործոկոն ծրագրերի իրականացում:	Բարգործություն միջոցով խնդիրների լուծում, բարեգործություն խթանում: Դպրոցի, համայնքի և պետության հանդեպ ընդհանուր մշակույթի և հոգատարության ձևավորում:	2024-2029 2024-2026 2024-2026	Մոտիվացնել շահագրգիռ բոլոր կազմակերպություններին Բարեգործական հիմնադրամների հասույթն ուղղել դպրոցի բարեկարգմանը:	Արտակարգ իրավիճակներ	Բոլոր փոփոխությունները և լրացումները արտացոլել տնօրենի տարեկան աշխատանքային պլանում, զարգացման ծրագրի հավելվածներում	Արձանագրություններ

Մանկավարժական համակազմ						
Փոխներգործուն, ստեղծագործական, ինքնակրթության, երեխայի դաստիարակության մեթոդների յուրացման նպատակով սեմինարների կազմակերպում, հարցերի պարզաբանում, մասնակցություն վերապատրաստումներին, Կամավոր և պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կազմակերպում, Կամավոր ատեստավորված և տարակարգ ունեցող ուսուցիչների թվի ավելացում: Մանկավարժների մասնագիտական և մեթոդական օգնության տրամադրում, Ծնող-ուսուցիչ կապի ամրա-պնդում, համատեղ ծրագրերի մշակում:	Կրթության որակի բարձրացում, համերաշխ, ճկուն, համագործակցող միջավայրի ստեղծում, փորձառու և ճանաչված մասնագետների, նորարար և ստեղծագործ ուսուցչական համակազմի ստեղծում ծնող-ուսուցիչ կապի սերտացում	2024-2027 2024-2029 2024-2025	Ժամանակա-ցույցերի և հարցաթեր-թիկների կազմում, Կարիքի ուսումնասի-րում,աշխա-տանքներ կատարելու նպատակով ժամանակա-ցույցերի կազմում	Արտակարգ իրավիճակներ Արտակարգ դրություն	Դպրոցի զարգացմանն ուղղված գործողու-թյունները պարբերա-բար պետք է վերանայել՝ ելնելով պետության քաղաքակա-նությունից և շահառու խմբերի կարիքից, փոփոխութ-յուններն ու լրացումները կկատարվեն տնօրենի տարեկան աշխա-տանքային պլանում և ԶԾ-ում:	Ներքին գնահատման հաշվետվություններ
Կառավարման և խորհրդակցական մարմիններ						
Մշտապես տնօրինության կառավարման կարողությունների կատարելագործում, ծրագրերի մշակում, նոր ռեսուրսների ներգրավում, վար-չական աշխատանքի արդիականացում,	Համագործակցող վարչական կազմ, բարոյահոգեբանա կան, ստաեղծագոր-ծական առողջ միջավայր: Կապահովենք	2024-2026 2024-2025	Մասնակցել դպրոցում գործող կառավարման և խորհրդակցակ ան բոլոր մարմինների նիստերին, կատարել	Արտակարգ իրավիճակ-ներ	Դպրոցի զարգացմանն ուղղված գործողու-թյունները պարբերա-բար պետք է վերանայել՝ ելնելով պետության	Արձանագրություն

Կազմակերպել սեմինարներ և քննարկումներ մասնակցային կառավարման մոդելը ավելի արդյունավետ դարձնելու համար, Խորհրդատվական քննարկումների անցկացում խորհրդակցական բոլոր մարմինների միջև, համատեղ գործողությունների պլանի մշակում Շրջանավարտների խորհրդի ստեղծում, ի նպաստ դպրոցի գործողությունների պլանի մշակում:	բազմակարծիք ներառական,մասնակցային միջավայր, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքներին համապատաս-խան ՄԽ,ԱԽ, ԾԽ , ԿԽ գործունեու-թյուն:	2025-2028	դիտարկում-ներ և եզրահան-գումներ:		քաղաքակա-նությունից և շահառու խմբերի կարիքից, փոփոխություններն ու լրացումները կկատարվեն տնօրենի տարեկան աշխա-տանքային պլանում և զարգացման ծրագրում:	Ներ հաշվետվություններ
Աշակերտական համակազմ						
Կազմակերպել բազմաբնույթ և բազմապիսի միջոցառումներ, էքսկուրսիաներ, արշավներ, քննարկումներ, կլոր սեղաններ, ինտելեկտուալ և սպորտային խաղեր: Խթանել առարկայական օլիմպիադաների մասնակցությունը, մասնագիտության կողմնորոշման նպատակով կազմակերպել հանդիպումներ տարբեր մասնագետների հետ, որոնք կկիսվեն իրենց փորձով:	Բանիմաց և բազմակող-մանի զարգացած աշակերտներ, դպրոցի հեղինակության բարձրացում, առողջ ապրելակերպի խթանում: Սոցիալ-մշակութային կենտրոն դպրոցի ստեղծում, աակերտ թվի ավելացում, մասնագիտո-րեն կողմնորոշ-ված աշակերտներ	2024-2029 2024-2026	Կազմել այցերի ժամանակա-ցույց Կազմակերպել անհատական պարապ-մունքներ Խրախուսել սովորողների ձեռքբերում-ները	Արտակարգ իրավիճակ-ներ Արտակարգ դրություն	Դպրոցի զարգացմանն ուղղված գործողութ-յունները պարբերա-բար պետք է վերանայել՝ ելնելով պետության քաղաքակա-նությունից և շահառու խմբերի կարիքից, փոփոխութ-յուններն ու լրացումները կկատարվեն տնօրենի տարեկան աշխատանքա յին պլանում և զ. ծրագրում:	Արձանագրություններ հաշվետվություններ
Բազմակարծիք, մասնակցային, ներառական, արժեքային միջավայրի ձևավորում						
Բազմակարծիք ներառական,	Դպրոցում միջավայրի	2024-2026	Կազմակերպել հանդի-	Արտակարգ	Դպրոցի զարգացմանն	Ար

մասնակցային արժեքներն ապահովող միջոցառումների կազմակեր-պում,խնդիրների վեր հանում և լուծման ուղիների որոնում: Ներառական կրթության գլխավոր խնդիրը մարդու ինտեգրումն է սոցիումին՝ տանել շերտավորված աշխատանք, ԿԱՊԿ ունեցող սովորող-ների հետ կազմա-կերպել ուսուցում Առպ-ի հիման վրա:	հարմարեցման պայմանների ապահովում,ն անվընտանգ, առողջ, ինտեգրված աշխատանքի և ուսուցման կազմակերպում Ապահովել համընդհանուր ներառում, դպրոցում միջավայրի հարմարեցում:	2024-2027	պումներ ՏՄԱԿ-ի ՀՄԿ-ի, ԲՄԹ մասնագետներ ի հետ, ստանալ անհրաժեշտ խորհրդատը-վություն,	իրավիճակ-ներ Արտակարգ դրություն	ուղղված գործողու-թյունները պարբերա-բար պետք է վերանայել՝ ելնելով պետության քաղաքակա-նությունից և շահառու խմբերի կարիքից	ձանագրություն ներ
Նոր տեխնոլոգիաներ և նորարարություններ						
Ժամանակակից համակարգչային տեխնիկայի ձեռք բերում, լաբորատոր սարքերի և սարքավորումների, գործիքակազմի և ուսումնական նյութերի համալրում: ՏՀՏ ոլորտի սեմինարների կազմակերպում, հեռավար դասավանդման հմտությունների զարգացում, մեդիագրագիտու-թյան խթանում:	ՏՀՏ ոլորտի զարգացում և նորարարու-թյունների լի-արժեք ներ-դրում, կիրառումը դասապրոցե-սում, կրթության որակի բարձրացում: Մեդիագրագետ մանկավարժակա ն, աշակեր-տական, ծնողական համայնքի ստեղծում:	2024-2027 2024-2026	Կարիքը ներկայացնե վարչատնտեսա կան հմկարգողին Փոխօգնու-թյան, սեմինարների կազմակերպ-ում:	Արտակարգ իրավիճակ-ներ Արտակարգ դրություն	Դպրոցի զարգացմանն ուղղված գործողու-թյունները պարբերա-բար պետք է վերանայել՝ ելնելով պետության քաղաքակա-նությունից և շահառու խմբերի կարիքից, փոփոխութ-յուններն ու լրացումները կկատարվեն տնօրենի տարեկան աշխատան-քային պլա-նում և զարգացման ծրագրում:	Ներքին գնահատման հաշվետվություններ
Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության կազմակերպում						
ՀՊՉ ներդրման գործոություններիծր	21-րդ դարի, ստեղծագործ,	2024-2025	Սեմինարնե-րի կազմա-	Արտակարգ	Դպրոցի զարգացմանն	Արձ

ագրի կազմում, խորհրդատվու-թյան և սեմինար-ների կազմակեր-պում, ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների երկարօրյա ուսուցման կազմակերպում, ուսումնական խմբակների և նախագծային աշխատանքների պլանավորում, հաստատում: Անհատական աշխատանքի կազմակերպում առարկայական օլիմպիադաների մասնակից, արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների հետ:	կարողունակ և մրցունակ քաղաքացու ձևավորում, ՀՊՉ-ով սահմանված ուսումնառու-թյան վերջնար-դյունքների ապահովում:	2024-2029	կերպում, Խորհրդա-տվության ապահովում Ապահովել երկարօրյա ուսուցման գործընթացը, անհրաժեշտ գործիքակազմը	իրավիճակ-ներ Արտակարգ դրություն	ուղղված գործողու-թյունները պարբերա-բար պետք է վերանայել՝ ելնելով պետության քաղաքակա-նությունից և շահառու խմբերի կարիքից, փոփոխութ-յուններն ու լրացումները կկատարվեն տնօրենի տարե-կան աշխա-տանքային պլանում և զարգացման ծրագրում:	անագրությունները հաշվետվությունները
Աշխատակազմի արժեորման խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ						
Ներքին գնահատման արդյունքների, կատարած աշխատանքների հաշվետվություն-ների հիման վրա կազմակերպել պարգևատրումներ խրախուսել ուսուցիչների մասնակցությունը մրցույթներին, աջակցել ուսուցիչ-ներին տպագրելու սեփական հոդվածներ, կազմակերպել փորձառու ուսուցիչների մեծարման երեկոներ:	Արժեորված և գնահատված մանկավարժներ, առողջ մրցակցություն Մոտիվացված, նորի և նորարարության հանդեպ հետաքրքրվող մանկավարժներ: Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովում:	2023-2028 2023-2028	Արժեորել և խթանել մանկավարժի աշխատանքը Սահմանել մանկավարժիա շխատանքի գնահատման հատուկ չափանիշներ Ուսուցիչներին տեղեկացնել մրցույթների ժամանակա-ցույցի և ձևի մասին, խթանել նրանց մաս-նակցությունը	Արտակարգ իրավիճակ-ներ Արտակարգ դրություն	Դպրոցի զարգացմանն ուղղված գործողու-թյունները պարբերա-բար պետք է վերանայել՝ ելնելով պետության քաղաքակա-նությունից և շահառու խմբերի կարիքից փոփոխութ-յուններն ու լրացումները կկատարվեն տնօրենի տարեկան աշխա-	Արձանագրությունները

					տանքային պլանում և զարգացման ծրագրում:	
Ֆինանսատնտեսական գործունեություն						
Պլանավորել գնումների կազմակերպման, բյուջեի բաշխման գործընթացը, ֆի-նանսական միջոց-ներն օգտագործել նպատակային և կարիքից ելնելով, օրենքով սահման-ված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, աշխատել շեղումների ծավալը փոքրացնելու ուղղությամբ:	Ճիշտ պլանավորած վարչարարու-թյուն, ի նպաստ կրթության որակի Ձեռնարկատիրակ ան գործու-նեությունից ստացված հասույթն ուղ-ղել սովորողի կարիքին:	2024-2029 2024-2029	Կազմակերպել ցուցահան-դես-վաճառք, շենքի վարձակալությ ուն, Ապահովել համագործակց ության ջերմ մթնոլորտ:	Արտակարգ իրավիճակ-ներ Արտակարգ դրություն	Դպրոցի զարգացմանն ուղղված գործողու-թյունները պարբերա-բար պետք է վերանայել՝ ելնելով պետության քաղաքակա-նությունից և շահառու խմբերի կարիքից, փոփոխութ-յուններն ու լրացումները կկատարվեն տնօրենի տարեկան աշխա-տանքային պլանում և զարգացման ծրագրում:	Արձանագրություններ

Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2024-2029 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: 2024-2029 թվականի զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների համար կան արդեն ձևավորված ամուր հիմքեր: